ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

## ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ

# ԾՐԱԳԻՐ

*ք.Վանաձոր 2013թ.*

## *Քաղաքապետի ուղերձը*

Ներկայացվող քառամյա զարգացման ծրագիրը առաջիկա չորս տարիների համար հանդիսանալու է Վանաձոր քաղաքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Քառամյա զարգացման ծրագիրը, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ մշակում է համայնքի ղեկավարը և նրա աշխատակազմը, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծությանը և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունը, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: Քառամյա զարգացման ծրագիրը ներառում է նաև Հայաստանի Հանրապետության նախագահի, Վանաձորի քաղաքապետի նախընտրական ծրագրերի բաղադրիչները և Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի հիմնական քաղաքականությունը:

Վանաձոր քաղաքի ներդաշնակ և համաչափ զարգացման, վանաձորցիների բարեկեցության ապահովման համար առաջիկա չորս տարիներին քառամյա զարգացման ծրագիրը հանդիսանալու է մեր ամենօրյա աշխատանքային փաստաթուղթը:

# *Վ Ա Ն Ա Ձ Ո Ր Ի   Հ Ա Մ Ա Յ Ն Ք*

Վանաձորը Լոռու մարզկենտրոնն է, գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում: Զբաղեցնում է 2599.33 հեկտար մակերես Փամբակի և Բազումի լեռների հովտում: Քաղաքի կարգավիճակ ստացել է 1924 թվականից, կոչվել է Ղարաքիլիսա, հետագայում վերանվանվել է Կիրովական, 1992 թվականից կոչվում է Վանաձոր:

Հեռավորությունը Երևանից ավտոմոբիլային ճանապարհով 125 կմ է, երկաթգծով՝ 224 կմ: Քաղաքի զբաղեցրած մակերեսի հիմնական մասը ծովի մակերևույթից բարձր է 1353 մ: Քաղաքի միջով հոսում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը:

Կլիման փափուկ է և մեղմ: Հունվարի միջին ջերմաստիճանը – 4,2° C է, հուլիսինը՝ +19,7°C, նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է -32°C, առավելագույնը՝ +36°C: Միջին ամսական տեղումները 551մմ: Վանաձորը տարածքային վարչական կենտրոն է, տրանսպորտային հանգույց՝ այստեղով են անցնում Երևան–Թբիլիսի երկաթգիծը, ինչպես նաև միջպետական կարևորագույն ավտոճանապարհներ:

## *Համայնքի իրավիճակը բնութագրող ցուցանիշներ*

Ֆ Ի Զ Ի Կ Ա Կ Ա Ն   Ե Վ   Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Գ Ր Ա Կ Ա Ն   Ի Ր Ա Վ Ի Ճ Ա Կ Ն Ե Ր

| *Ուժեղ կողմեր* | *Թույլ կողմեր* | *Հնարավորություններ* | *Խոչընդոտներ* |
|---|---|---|---|
| ❖ մարզկենտրոն<br>❖ հանրապետության համար մեծ նշանակություն ունեցող ճանապարհներ<br>❖ երկաթուղային հանգույց<br>❖ մեղմ, հանդարտ կլիմա | • օդանավակայանի բացակայություն<br>• ակտիվ սեյսմիկ տարածք<br>• որոշ տարածքներում սողանքների վտանգ | ○ զբոսաշրջության զարգացում<br>○ առողջարանային կենտրոն<br>○ մանկական ճամբարներ | ○ հնարավոր երկրաշարժ |
| ❖ բնական հանքային ջրեր<br>❖ կանաչ գոտիներ<br>❖ հարմար լեռնազոգեր լեռնադահուկավազքի համար<br>❖ լեռնային զբոսաշրջության համար հարմարություններ<br>❖ Բուժիչ տեղանքների աղբյուրներ<br>❖ խմելու ջրի ցայտաղբյուրներ | • զանգվածաբար հատած անտառներ | ○ լեռնային զբոսաշրջության զարգացում<br>○ լեռնային դահուկավազքային սպորտի և խաղերի զարգացում | |

Համայնքի մշտական բնակչության ընդհանուր թիվը վիճ վարչության 01.04.2012թ. տվյալներով 104800

## Ա Ճ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն  Շ Ո Ւ Կ Ա

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը | Հնարավորություններ | Խոչընդոտներ |
|---|---|---|---|
| - բարձրորակ մասնագետ-ների մեծ քանակ<br>- փոփոխությունների արագ հարմարվող աշխատանքա-յին ուժ | - մասնագետները չեն օգտագործել իրենց մասնագիտական գիտելիքները և հմտությունները երկար տարիներ<br>- միջազգային ստանդարտների վերաբերյալ գիտելիքի պակաս<br>- լավ կազմակերպված աշխատաշուկայի բացակայություն<br>- օրենսդրական ոչ կատարյալ դաշտ<br>- թաքնված գործազրկության բարձր մակարդակ<br>- աշխատանք գտնելու օժանդակող մասնավոր գործա-կալությունների բացակայություն | - փոքր և միջին բիզնեսի զարգացում<br>- տարբեր միջազգային կազմակերպութ-յունների գոր-ծունեություններ<br>- ներդրումների հնարավորութ-յուններ | - տնտեսական գործունեութ-յան համար անհամապա-տասխան շրջակա միջավայր |

***Վանաձոր քաղաքի կոմունալ ունեցվածքը 2012 թվականի տվյալներով***

| հ/հ | Անվանումը | Չափման միավորը | Քանակը |
|---|---|---|---|
| • | ***<u>Ճանապարհային ծածկույթ որից՝</u>*** | $մ^2$ | **1 246 885$մ^2$** |
| ա/ | ասֆալտբետոնե ծածծակույթ | $մ^2$ | 1 205 995 |
| բ/ | բետոնե սալիկներ | $մ^2$ | 32 530 |
| գ/ | բազալտե սալիկներ՝ | $մ^2$ | 7 600 |
| դ/ | գրանիտե սալիկներ | $մ^2$ | 750 |
| • | ***Մայթերի ծածակույթ*** | $մ^2$ | **375 330** |
| ա/ | *ասֆալտբետոնե* | $մ^2$ | 348 126 |
| բ/ | *բետոնե սալիկներով* | $մ^2$ | 25 740 |
| գ/ | *բազալտե սալիկներով* | $մ^2$ | 2 970 |
| • | ***Հենապատեր*** | $մ^2$ | **130 000** |
| • | ***Անձրևաջրատար համակարգ որից՝*** | հատ | **1980** |
| ա/ | անձրևաջրահեռացման դիտահորեր | հատ | 1370 |
| բ/ | դիտահորեր | հատ | 610 |
| գ/ | մայր գիծ | գծմ | 54 186 |

| | | | |
|---|---|---|---|
| • | *Էլեկտրական հենասյուներ* | հատ | 3897 |
| • | *Կանաչ գոտի* | | |
| ա/ | Ծառեր | հատ | 9200 |
| բ/ | տնկիներ | հատ | 2045 |
| գ/ | սիզամարգեր | $մ^2$ | 129 489 |
| դ/ | ծաղկանոցներ | $մ^2$ | 8000 |
| ե/ | թփեր | գծմ | 8755 |
| • | *Կամուրջներ* | | |
| ա/ | Տրանսպորտային | հատ | 28 |
| բ/ | Հետիոտն | հատ | 30 |
| • | *Այգիներ* | հատ | **4** |
| • | *Հրապարակներ* | հատ | **7** |
| • | *Հուշակոթողներ և հուշարձաններ* | հատ | **12** |

# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, ԱՐՎԵՍՏԻ, ԳԵՂԱՐՎԵՍՏԻ, ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ

| Հ/հ | Դպրոցի անվանումը | Ենթակայությունը | Օբյեկտի նախագծային հզորությունը /քմ/ | Աշակերտների թիվը փաստացի /նախագծային | | Ուսուցիչների թիվը /օժանդակ աշխա-տողների թիվը | | Հասցե, թաղամաս | Շենքային պայմաններ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2012 | 2012 | | 2012 | | 2012 | 2012 |
| 1. | Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոց ՀՈԱԿ | համայնքային | 1450 | 216 | 1000 | 30 | 16 | Վարդանանց 41 | քարաշեն |
| 2. | Շարա Տալյանի անվան երաժշտական դպրոց ՀՈԱԿ | | Էդ. Կզարթմյանի անվ. եր. դպր.-ում սենյակներ | 150 | - | 24 | 8 | Վարդանանց 41 | քարաշեն |
| 3. | Տիգրան Չուխաջյանի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ | | 864 | 243 | 400 | 43 | 11 | Աղայան 86ա | քարաշեն |
| 4. | Գր. Հախինյանի անվան երաժշտական դպրոց ՀՈԱԿ | | 350 | 89 | 300 | 19 | 5 | Ներսիսյան թաղ. 13 շենք | քարաշեն |
| 5. | Թիվ 6 արվեստի դպրոց ՀՈԱԿ | | 706,44 | 75 | 130 | 14 | 9 | Բաղրամյան 15/1դ | քարաշեն |
| 6. | Ստ. Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ | | 360 | 80 | 80 | 9 | 7 | Մոսկովյան 30 | քարաշեն |
| 7. | Պարարվեստի դպրոց ՀՈԱԿ | | Էդ. Կզարթմյանի անվ. եր. դպր.-ում սենյակներ | 90 | - | 12 | 2 | Վարդանանց 41 | քարաշեն |

# ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ

| Հ/հ | Գրադարանի անվանումը | Ենթակայությունը | Օբյեկտի նախագծային հզորությունը /քմ/ | Ընթերցողների թիվը /աշխատողների թիվը | | Հասցե, թաղամաս | Շենքային պայմաններ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2012 | 2012 | | 2012 | 2012 |
| 1. | Թիվ 1 մասսայական գրադարան | քաղաքապետարան | 150 | 987 | 4 | Տարոն 4 թիվ 18 գիշեօթիկ դպրոց | քարաշեն |
| 2. | Թիվ 2 մասսայական գրադարան | | 100 | 1500 | 5 | Բազում թիվ 25 միջն դպրոց | քարաշեն |
| 3. | Թիվ 4 մասսայական գրադարան | | 90 | 2000 | 5 | Չուխաջյան 30/17 | քարաշեն |
| 4. | Թիվ 5 մասսայական գրադարան | | 220 | 2520 | 10 | Ռիսանողական 6 | քարաշեն |
| 5. | Թիվ 4 մանկական-մասսայական գրադարան | | 120 | 1450 | 8 | Տարոն 2 թիվ 28 միջն. դպրոց | քարաշեն |
| 6. | Թիվ 2 մանկական գրադարան | | 140 | 1150 | 3 | Նարեկացի 47 | քարաշեն |
| 7. | Թիվ 3 մանկական գրադարան (Հրանտ Մաթևոսյանի անվան գրադարանային համակարգ) | | 300 | 3211<br>14268 | 11<br>60 | Թատերական 2 | քարաշեն |
| 8. | Թիվ 6 մանկական գրադարան | | 90 | 1450 | 9 | Երևանյան խճուղի 99/26 | քարաշեն |

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐ, ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ, ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԽՄԲԵՐ

| Հ/հ | Անվանումը | Ենթակայությունը | Օբյեկտի նախագծային հզորությունը /մարդ/ | | Օբյեկտի նախագծային հզորությունը /քմ/ | Աշխատողների թիվը | Հասցե, թաղամաս | Շենքային պայմաններ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2012 | | 2012 | 2012 | 2012 | 2012 |
| | | | դահլիճի նստատեղ | մարդ | | | | |
| 1. | Թիվ 1 մշակույթի տուն ՓԲԸ | համայնքային | 30 | 100 | 340 | 5 | Նարեկացու 43 | քարաշեն |
| 2. | Թիվ 2 մշակույթի տուն ՓԲԸ | | 33 | 120 | 240 | 4 | Ուսանողական 6 | քարաշեն |
| 3. | Թիվ 3 մշակույթի տուն ՓԲԸ | | 240 | 250 | 1620 | 6 | Զոր.Անդրանիկի 38 | քարաշեն |
| 4. | Ստ. Զորյանի տուն-թանգարան ՀՈԱԿ | | - | 60 | 318 | 14 | Ստ. Զորյան 24 | քարաշեն |
| 5. | Կերպարվեստի թանգարան ՀՈԱԿ | | - | 1000 | 2200 | 25 | Տիգրան Մեծի 58 | քարաշեն |
| 6. | Կամերային երգչախումբ ՓԲԸ | | - | - | - | - | Տիգրան Մեծի 22 | - |
| 7. | Կամերային նվագախումբ ՓԲԸ | | - | - | - | - | Տիգրան Մեծի 22 | - |
| 8. | Կամերային թատրոն ՓԲԸ | | - | - | - | - | Տիգրան Մեծի 22 | - |
| 9. | Տիկնիկային թատրոն ՓԲԸ | | 200 | - | 1296 | 11 | Վարդանանց 110ա | քարաշեն |
| 10. | <<Հորովել երգի-պարի համույթ>>ՀՈԱԿ | | 493 | - | 4818.3 | 70 | Տիգրան Մեծի 2 | քարաշեն |
| 11. | Երգի թատրոն ՀՈԱԿ | | - | - | - | 9 | Թատերական 4ա | քարաշեն |

# ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ

| Հ/հ | Նախադպրոցական ուսումնական հաստատություններ | Ենթակայություն | Խմբերի քանակը | Երեխաների թիվը փաստացի /նախագծային | | Դաստիարակների թիվը /օժանդակ աշխատողների թիվը | | Հասցե | Շենքային պայմաններ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2012 | 2012 | | 2012 | | 2012 | 2012 |
| | 1 | 2 | 3 | 4 | | 5 | | 6 | 7 |
| 1. | Թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ | քաղաքապետարան | 3 | 130 | 160 | 7 | 8 | Մյասնիկյան 28 | քարաշեն |
| 2. | Թիվ 3 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 2 | 43 | 43 | 4 | 7 | Շիրակի խճուղի 64 | տնակային |
| 3. | Թիվ 4 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 2 | 60 | 60 | 4 | 8 | Սայաթ-Նովա 18 | տնակային |
| 4. | Թիվ 5 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 5 | 154 | 184 | 11 | 11 | Մաշտոցի 15 | քարաշեն |
| 5. | Թիվ 7 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 2 | 52 | 52 | 4 | 6 | Նարեկացու 47 | քարաշեն |
| 6. | Թիվ 8 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 6 | 170 | 170 | 12 | 12 | Գորկու 9ա | տնակային |
| 7. | Թիվ 10 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 2 | 70 | 70 | 6 | 7 | Չուխաջյան 12ա | քարաշեն |
| 8. | Թիվ 11 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 3 | 85 | 85 | 6 | 8 | Չուխաջյան 18ա | քարաշեն |
| 9. | Թիվ 15 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 3 | 129 | 160 | 7 | 12 | Նալբանդյան 1/3 | քարաշեն |
| 10. | Թիվ 19 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 3 | 115 | 145 | 6 | 8 | Սուխումի 17 | քարաշեն |
| 11. | Թիվ 24 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 4 | 135 | 160 | 8 | 13 | Լազյան 32 | քարաշեն |
| 12. | Թիվ 28 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 3 | 76 | 76 | 5 | 8 | Աբեղյան 46ա | քարաշեն |
| 13. | Թիվ 30 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 4 | 130 | 160 | 7 | 9 | Շինարարների 91 | քարաշեն |
| 14. | Թիվ 31 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 4 | 125 | 150 | 8 | 10 | Ներսիսյան թաղ. 6 | քարաշեն |
| 15. | Թիվ 32 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 2 | 70 | 100 | 6 | 7 | Տարոն 4 Բեյրութ.թաղ | քարաշեն |
| 16. | Թիվ 33 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 4 | 130 | 160 | 9 | 10 | Տարոն 3 ՔՇՀ 7 | քարաշեն |
| 17. | Թիվ 34 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 2 | 65 | 100 | 5 | 8 | Տարոն 3 ՔՇՀ 7 | քարաշեն |
| 18. | Թիվ 35 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 3 | 95 | 130 | 7 | 8 | Տարոն 4 Ածխահատներ | քարաշեն |
| 19. | Թիվ 40 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 2 | 63 | 100 | 4 | 7 | Տարոն 2 ՔՇՀ 4 | քարաշեն |
| 20. | Թիվ 41 ՆՈՒՀ ՀՈԱԿ | | 2 | 64 | 100 | 5 | 7 | Շիրակացու 1 փակուղի | քարաշեն |
| ***Ընդամենը*** | | | **61** | **1961** | | **305** | | | |

# ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ

| հ/հ | *Մարզադպրոցի անվանումը* | *Ենթակայություն* | *Օբյեկտի նախագծային հզորությունը (մ2)* | *Մարզիկների թիվը նախագծային/ փաստացի* | *Մարզիչների թիվը/ Օժանդակ աշխատողների թիվը* | *Մարզաձևերը / խմբերը* | *Հասցե, թաղամաս* | *Շենքային պայմաններ* |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ***2012*** | ***2012*** | ***2012*** | | | |
| 1 | <<Օլիմպիական հերթափոխի մենապայքարային մարզաձևերի մարզադպրոց>> ՀՈԱԿ (ՕՀՄՄԴ) | Քաղաքապետարան | 937.5 | 304 | 18/21 | Ազատ ըմբշամարտ/**12**<br>բռնցքամարտ/**10**<br>ձյուդո/**2**<br>սամբո/**6**<br>Քիքբոքսինգ/**1** | Աղայան 72/1 | շենքային |
| 2 | <<Ծանրամարտի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց>> ՀՈԱԿ | | 288 | 139 | 11/11 | Ծանրամարտ /**19** | Զորավար Անդրանիկի 8ա | շենքային |
| 3 | <<Շախմատի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց>> ՀՈԱԿ | | 240 | 232 | 9/14 | Շախմատ/**21** | Տիգրան Մեծի 2բ | շենքային |
| 4 | <<Մենապայքարային մարզաձևերի մասնագիտացված մարզադպրոց>> ՀՈԱԿ | | 1595,2 | 202 | 10/15 | Բռնցքամարտ/**8**<br>սուսերամարտ/**2**<br>ձյուդո/**9** | Սուխումի 5 | շենքային |
| 5 | <<Աթլետիկայի և ձմեռային մարզաձևերի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց>> ՀՈԱԿ | | 1922 | 374 | 18/25 | Աթլետիկա /**24**<br>դահուկ/**4**<br>լեռնադահուկ/**4** | Զորավար Անդրանիկի 8բ | շենքային |
| 6 | <<Ֆուտբոլի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց >> ՀՈԱԿ | | 800 | 264 | 18/13 | Ֆուտբոլ/**16** | Հակոբյան 1 | տնակային |
| 7 | <<Ա Ազարյանի անվան<<Կենտրոն>> համալիր մարզադպրոց>> ՀՈԱԿ | | 1100 | 341 | 16/17 | Սպ.մարմնամարզություն/**9**<br>սպ. ակրոբատիկա/**5**<br>վոլեյբոլ/**2**<br>բասկետբոլ/**4**<br>սեղանի թենիս/**4**<br>թենիս/**1**<br>ձեռքի գնդակ/**4** | Հերացու 41 | շենքային |
| 8 | <<Տարոն>> համալիր մարզադպրոց>> ՀՈԱԿ | | 4280 | 189 | 8/15 | շախմատ/**4**<br>բասկետբոլ/**4**<br>սեղանի թենիս/**4**<br>բադմինտոն/**4**<br>ֆուտբոլ/**1** | Տարոն –4, Բելառուսների 42գ | շենքային |
| 9 | <<Լողի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց>> ՀՈԱԿ | | 1440 | 232 | 10/17 | լող/**22** | Հերացու 24 | շենքային |

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

| Ուստարին | Դպրոցների թիվը | Ուսուցիչների թիվը | Ուսումնաօժանդակ աշխ.թիվը | Աշակերտների թիվը |
|---|---|---|---|---|
| 2009-2010 | 30 | 1061 | 127 | 12176 |
| 2010-2011 | 26 | 903 | 100 | 9268 |
| 2011-2012 | 26 | 928 | 98 | 9562 |
| 2012-2013 | 26 | 938 | 102 | 8748 |

## ՀԱՄԱՅՆՔԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.**Հիվանդանոցներ** _2_

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ենթա կայությունը | Մահճակալների թիվը | Օբյեկտի նախագծային հզորությունը՝ քմ | Բժիշկների և այլ աշխատող-ների ընդհանուր թիվը/մարդ/ |
|---|---|---|---|---|
| | | 2012 | 2012 | 2012 |
| **«Վանաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ** | Մարզային | 190 | 6851.68-հիմնական մասնաշենքեր, 3308.71-թերապևտիկ մասնաշենք | 495 |
| **«Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ** | | 45 | 951.69 326.35-հակատուբ մասնաշենք | 48 |

**2.Այլ առողջապահական կենտրոններ՝ պոլիկլինիկաներ**-5
Յուրաքանչյուր հաստատության համար՝

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ենթա կայությունը | Մասնա գիտացումը | Օբյեկտի նախագծային հզորությունը՝ քմ | Բժիշկների և այլ աշխատողների ընդհանուր թիվը/մարդ/ |
|---|---|---|---|---|
| | | | 2012 | 2012 |
| **«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ** | Մարզային | Առաջնային բուժօգնություն | 2134.01 | 91 |
| **«Գուգարք՝ կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ** | | | 1945.6 | 84 |
| **«Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ** | | | 1400 | 90 |
| **«Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» ՊՓԲԸ** | | | 936.1 | 67 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **«Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա»ՊՓԲ Ը** | | | 2710.0<br>182.52-ընտանեկան բժշ.գրասենյակ | 71 |

**3.Առողջապահական կենտրոններ /դիսպանսերներ/ թիվը՝ -2**

Յուրաքանչյուր հաստատության համար

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ենթա կայությունը | Մասնա գիտացումը | Օբյեկտի նախագծային հզորությունը՝ քմ | Բժիշկների և այլ աշխատողների ընդհանուր թիվը/մարդ/ |
|---|---|---|---|---|
| | | | 2012 | 2012 |
| **«Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ** | Մարզային | հոգենյարդաբանական և նարկոլոգիական ծառայություն | 1016.14 | 43 |
| **«Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ** | | Լոռու մարզի ողջ տարածքում արյան փոխներարկման գծով աշխատանքների կազմակերպում | 214.64 | 16 |

# ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի 2011-2012թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2013-2016թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2011թ. նախատ. | 2011թ. փաստ. | 2012թ. նախատ. | 2012թ. փաստ. 9 ամիս | 2013թ. նախատ. | 2014թ. կանխ. | 2015թ. կանխ. | 2016թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)* | 2285958,6 | 2210916,9 | 2298777,7 | 1574299,0 | 1945560,0 | 1987796,4 | 2021494,4 | 2054995,4 |
| I. | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)* | 1842754,1 | 1790549,6 | 2041475,7 | 1483656,3 | 1854680,0 | 1895796,4 | 1924494,4 | 1952995,4 |
| 1. | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 402912,8 | 376891,9 | 378205,8 | 234675,7 | 423723,0 | 436714,0 | 448098,0 | 459745,0 |
| 1.1 | Գույքային հարկեր անշարժ գույքից | 169000,0 | 158524,0 | 153748,0 | 81173,3 | 157000,0 | 158748,0 | 160520,0 | 162320,0 |
| | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 122000,0 | 118486,0 | 115453,0 | 57872,0 | 114300,0 | 115208,0 | 116940,0 | 118700,0 |
| | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 47000,0 | 40038,0 | 38295,0 | 23301,3 | 43500,0 | 43540,0 | 43580,0 | 43620,0 |
| 1.2 | Գույքային հարկեր այլ գույքից | 150300,0 | 134645,8 | 138100,0 | 88734,6 | 179500,0 | 187660,0 | 196228,0 | 205225,0 |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 150300,0 | 134645,8 | 138100,0 | 88734,6 | 178700,0 | 187660,0 | 196228,0 | 205225,0 |
| 1.3 | Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ | 53612,8 | 56159,1 | 56357,8 | 45303,0 | 60223,0 | 63306,0 | 64350,0 | 65200,0 |
| | Տեղական տուրքեր | 53612,8 | 56159,1 | 56357,8 | 45303,0 | 60223,0 | 63306,0 | 64350,0 | 65200,0 |
| 1.4 | Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | 30000,0 | 27563,0 | 30000,0 | 19464,8 | 27000,0 | 27000,0 | 27000,0 | 27000,0 |
| | Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր | 30000,0 | 27563,0 | 30000,0 | 19464,8 | 27000,0 | 27000,0 | 27000,0 | 27000,0 |
| 1.5 | Այլ հարկային եկամուտներ | | | | | | | | |
| | Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ | | | | | | | | |
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | | | | | | | |
| 2. | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 1132291,0 | 1132291,0 | 1363271,1 | 1073256,8 | 1153272,0 | 1169212,3 | 1185772,3 | 1201872,3 |
| 2.1 | Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.2 | Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
| 2.3 | Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | 1132291,0 | 1132291,0 | 1153271,1 | 864025,8 | 1153272,0 | 1169212,3 | 1185772,3 | 1201872,3 |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 1129243,7 | 1129243,7 | 1149958,8 | 862469,1 | 1149959,0 | 1165900,0 | 1182460,0 | 1198560,0 |
| բ) | Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ | | | | | | | | |
| գ) | Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 3047,3 | 3047,3 | 3312,3 | 1556,7 | 3313,0 | 3312,3 | 3312,3 | 3312,3 |
| դ) | Այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
| 2.4 | Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | | | 210000,0 | 209231,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | | 210000,0 | 209231,0 | | | | |
| բ) | Այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
| 3. | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* | 307550,3 | 281366,7 | 299998,8 | 175723,8 | 277685,0 | 289870,1 | 290624,1 | 291378,1 |
| 3.1 | Տոկոսներ | | | | | | | | |
| 3.2 | Շահաբաժիններ | | | | | | | | |
| 3.3 | Գույքի վարձակալությունից եկամուտներ | 32100,0 | 33060,9 | 33200,0 | 26297,3 | 32600,0 | 32850,0 | 33104,0 | 33358,0 |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ | 25600,0 | 23948,0 | 25600,0 | 17312,3 | 25000,0 | 25250,0 | 25504,0 | 25758,0 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ | | | | | | | | |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | | | | | | | | |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 6500,0 | 9112,9 | 7600,0 | 8985,0 | 7600,0 | 7600,0 | 7600,0 | 7600,0 |
| 3.4 | Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից | 31050,3 | 30441,0 | 31448,8 | 20888,7 | 31021,0 | 31020,1 | 31020,1 | 31020,1 |
| | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 31050,3 | 30441,0 | 31448,8 | 20888,7 | 31021,0 | 31020,1 | 31020,1 | 31020,1 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.5 | Վարչական գանձումներ | 29200,0 | 25291,6 | 18850,0 | 10440,0 | 21150,0 | 22000,0 | 22500,0 | 23000,0 |
| | Տեղական վճարներ | 25000,0 | 11250,5 | 14050,0 | 6435,0 | 16050,0 | 17000,0 | 17500,0 | 18000,0 |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 4200,0 | 14041,1 | 4800,0 | 4005,0 | 5100,0 | 5000,0 | 5000,0 | 5000,0 |
| 3.6 | Մուտքեր տույժերից, տուգանքներից | 4500,0 | 3208,3 | 4500,0 | 1781,2 | 4000,0 | 4000,0 | 4000,0 | 4000,0 |
| | Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 4500,0 | 3208,3 | 4500,0 | 1781,2 | 4000,0 | 4000,0 | 4000,0 | 4000,0 |
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող գծով տույժերից | | | | | | | | |
| 3.7 | Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
| 3.8 | Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
| 3.9 | Այլ եկամուտներ* | 210700,0 | 189364,9 | 212000,0 | 116316,6 | 188914,0 | 200000,0 | 200000,0 | 200000,0 |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | | | | | |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | 121577,0 | 104721,3 | 92660,2 | 91417,3 | 66480,0 | 95000,0 | 95000,0 | 95000,0 |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | 210700,0 | 189364,9 | 212000,0 | 116316,6 | 188914,0 | 200000,0 | 200000,0 | 200000,0 |
| II | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4) | 371825,3 | 348988,1 | 235200,0 | 68540,7 | 90880,0 | 92000,0 | 97000,0 | 102000,0 |
| 1. | Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | 371825,3 | 348988,1 | 235200,0 | 68540,7 | 90880,0 | 92000,0 | 97000,0 | 102000,0 |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | 352660,3 | 335203,9 | 157225,0 | 59746,3 | 59000,0 | 60000,0 | 62000,0 | 65000,0 |
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | | | | | | | | |
| | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | 19165,0 | 13784,2 | 77975,0 | 8794,4 | 31880,0 | 32000,0 | 35000,0 | 37000,0 |
| 2. | Պաշարների իրացումից մուտքեր | | | | | | | | |
| 3. | Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | | |
| 4. | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| | Հողի իրացումից մուտքեր | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | | |
| III | ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ) | 71379,2 | 71379,2 | 22102,0 | 22102,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| Ա. | ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2) | 71379,2 | 71379,2 | 22102,0 | 22102,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1. | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1.1 | Արժեթղթեր | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| | - թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | | |
| | - հիմնական գումարի մարում | | | | | | | | |
| 1.2 | Վարկեր | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| | - վարկերի ստացում | | | | | | | | |
| | - ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | | |
| 1.3 | Փոխատվություններ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| | - բյուջետային փոխատվությունների ստացում | | | | | | | | |
| | - ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | | |
| 2. | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | 71379,2 | 71379,2 | 22102,0 | 22102,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 2.1 | Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն | | | | | | | | |
| 2.2 | Փոխատվություններ | | | | | | | | |
| 2.3 | Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը | 71379,2 | 71379,2 | 22102,0 | 22102,0 | | | | |
| 2.4 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս | | | | | | | | |
| 2.5 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս | | | | | | | | |
| 2.6 | Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում | | | | | | | | |
| | որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը | | | | | | | | |
| Բ. | ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1. | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | | | | |
| | - թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | - հիմնական գումարի մարում | | | | | | | | |
| 1.2 | Վարկեր | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| | - վարկերի ստացում | | | | | | | | |
| | - ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | | |
| 1.3 | Փոխատվություններ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| | - բյուջետային փոխատվությունների ստացում | | | | | | | | |
| | - ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | | |

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

# ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- *Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում և դրանց հսկողության հարցում հասարակության հետ հետադարձ կապի ապահովում:*

  Գործող համակարգին զուգահեռ կգործարկվի էլեկտրոնային կառավարման համակարգը, ինչը կապահովի համացանցի միջոցով ծառայությունների մատուցում՝ նվազագույնի հասցնելով շփումը համայնքային ծառայողի ու քաղաքացու միջև և բնակչությանը հնարավորություն կտա առանց քաղաքապետարան այցելելու ստանալ իրեն հուզող խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն:
- *Տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության շրջանակներում ծախսված կամ ներդրված միջոցների դիմաց առավելագույն արժեքի ստեղծման սկզբունքի որդեգրում,* ինչը նշանակում է կառավարել ՏԻՄ-ի միջոցները վարչարարությամբ և հետևողականորեն բարձրացնել գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը: Ցանկալի արդյունքների հստակ ձևակերպումը և դրանց նկատմամբ կատարողականի գնահատումը կդառնան ՏԻՄ-ի աշխատաոճը:
- *Վանաձոր քաղաքի համաչափ զարգացման քաղաքականության որդեգրում:*
- *Տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեի հավաքագրման մեխանիզմների կատարելագործում և բյուջետային ծախսերի թափանցիկության մակարդակի բարձրացում,* ինչը ենթադրում է համայնքի բյուջեի հավաքագրման ծավալների մեծացում, բյուջետային ծախսերի արդյունավետության և հասցեականության բարձրացում, ինչպես նաև թափանցիկության ապահովում:
- *Վանաձոր համայնքի ներհամայնքային ենթակառուցվածքների բարելավում.* սա ենթադրում է ներհամայնքային ճանապարհների ընթացիկ և կապիտալ վերանորոգում, քաղաքի լուսավորման ցանցի ընդլայնում, հասարակական հանգստի վայրերի ավելացում և բարելավում, ինչպես նաև այլ ենթակառուցվածքների ընթացիկ և կապիտալ վերանորոգում:
- *Վանաձոր համայնքի քաղաքաշինության զարգացում:* Այս գերակայությունը ենթադրում է առկա բնակֆոնդի կապիտալ և ընթացիկ վերանորոգում, սեյսմակայուն նոր ճարտարապետական լուծումների մշակում և իրականացում, քաղաքաշինական նորմերի կիրառում և հետևողականություն, քաղաքի ճարտարապետական միջավայրի պահպանում և զարգացում:
- *Վանաձոր համայնքի հոգևոր և մշակութային կյանքի բարելավում:* Հասարակության մշակութային մակարդակի և մշակութային արտադրանքի որակի բարձրացում՝ ազգային մշակութային հիմքերի պարտադիր պահպանմամբ, նոր սերնդի աշխարհայացքի ընդլայնմամբ, Հայաստանի և համաշխարհային մշակութային ռեսուրսները համայնքի բնակչության հասանելի դարձնելու միջոցով:
- *Վանաձոր համայնքի բնապահպանական հիմնախնդիրների լուծում,* ինչը ենթադրում է քաղաքի կանաչ հատվածների ավելացում, շրջակա միջավայրի պահպանության վերահսկողություն, հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական և արտադրական թափոններով աղտոտումից զերծ պահելու պահպանության իրականացում:

# ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2013-2016ԹԹ. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում

*<u>ՆԱԽԱԲԱՆ</u>*

Տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ և օրենքի շրջանակներում ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինների համայնքային խնդիրները լուծելու և համայնքի սեփականությունը տնօրինելու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և ՏԻՄ օրենքով երաշխավորված իրավունքն ու համայնքի կարողությունն է:

Ժողովրդի իշխանություն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով Վանաձոր համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրվել են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար:

Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության սկզբունքներից են՝ համայնքի բնակիչների առջև հաշվետու լինելը և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, որոնք չափազանց կարևոր են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հասարակության վստահության մեծացման և համայնքի կայացման համար: Վանաձորի քաղաքապետարանն իր գործունեությամբ հանդիսանում է այդ սկզբունքների կրողը և իր գործունեության ընթացքում հնարավորության սահմաններում աստիճանաբար բարձրացրել է քաղաքապետարանի գործունեության թափանցիկության մակարդակն ու հետամուտ է եղել հասարակության առջև հաշվետու լինելու կարևոր սկզբունքին:

Չնայած նախկինում կատարված զգալի աշխատանքներին, ներկայումս Վանաձորի քաղաքապետարանը իր գործունեության թափանցիկության բարձրացման տեսանկյունից դեռ անելիքներ ունի:

*<u>ՆՊԱՏԱԿԸ</u>*

Ապահովել Վանաձորի քաղաքապետարանի գործունեության թափանցիկությունը բարձր մակարդակ:

*<u>ԽՆԴԻՐՆԵՐԸ</u>*

Համակարգի գործունեության թափանցիկության բարձր մակարդակի հասցնելու համար հարկավոր է իրականացնել համալիր գործողություններ, ինչպիսիք են ՝

- ՏԻՄ-ի կողմից իրականացվող գործառույթների, ծրագրերի, մրցույթների վերաբերյալ հասարակության լայն շերտերին իրազեկումը ինտերնետային կայքէջի և ԶԼՄ-ների միջոցով,
- համակարգչային և այլ հարակից տեխնիկական բազայի թարմացումը,
- քաղաքապետարանի բոլոր համակարգիչների ներքին ցանցի ընդլայնումը,
- տեղեկատվական կենտրոնի վերագործարկումը,
- մեկ պատուհանի սկզբունքի կիրառումը ,
- աշխատակիցների համակարգչային հմտությունների զարգացումը կամ նրանց վերապատրաստումը:

Նշված խնդիրների լուծմամբ միայն կարելի է տեղական ինքնակառավարման գործունեությունը հասցնել թափանցիկության բարձր մակարդակի և արժանանալ ՏԻՄ-ի գործունեության նկատմամբ հասարակության լիարժեք վստահությանը:

| տարեթիվը | խնդիրը | Չափման միավոր | Կատարվելիք աշխատանքների ծավալը |
|---|---|---|---|
| 2013 | համակարգչային տեխնիկական բազայի թարմացում | % | 10% |
| 2014 | համակարգչային տեխնիկական բազայի թարմացում | % | 10% |
| 2015 | համակարգչային տեխնիկական բազայի թարմացում | % | 10% |
| 2016 | համակարգչային տեխնիկական բազայի թարմացում | % | 20% |
| 2013 | Ինտերնետային կայք էջի դոմեյն և հոստինգ | **դրամ** | **63200** |
| 2014 | Ինտերնետային կայք էջի շահագործում | **դրամ** | **63200** |
| 2015 | Ինտերնետային կայք էջի շահագործում | **դրամ** | **63200** |
| 2016 | Ինտերնետային կայք էջի շահագործում | **դրամ** | **63200** |
| 2013 | 12 մբ/վրկ կորպորատիվ ինտերնետային կապ | **դրամ** | **1080000** |
| 2014 | 12 մբ/վրկ կորպորատիվ ինտերնետային կապ | **դրամ** | **1080000** |
| 2015 | 12 մբ/վրկ կորպորատիվ ինտերնետային կապ | **դրամ** | **1080000** |
| 2016 | 12 մբ/վրկ կորպորատիվ ինտերնետային կապ | **դրամ** | **1080000** |
| 2013 | համայնքի բնակիչների շրջանում ՏԻՄ-ի գործունեության թափանցիկության մակարդակը պարզելուն և համայնքի զարգացման վերաբերյալ համայնքի բնակիչների կարծիքի ուսումնասիրմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտությունների իրականացում | **դրամ** | **800000** |
| 2015 | համայնքի բնակիչների շրջանում ՏԻՄ-ի գործունեության թափանցիկության մակարդակը պարզելուն և համայնքի զարգացման վերաբերյալ համայնքի բնակիչների կարծիքի ուսումնասիրմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտությունների իրականացում | **դրամ** | **800000** |

*ՆՊԱՏԱԿԸ*

Տեղական ինքնակառավարման համակարգի ֆինանսատնտեսական գործունեության արդիականացում

Տեղական ինքնակառավարման միջնաժամկետ և տարեկան բյուջետային ծրագրերը պետք է սերտորեն շաղկապված լինեն կառավարության երկարաժամկետ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի ու նպատակների հետ: Բյուջետային միջոցները կկառավարվեն գործարարության օրենքով՝ խնայելով միջոցները և հետևողականորեն բարձրացնելով

գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը: ՏԻՄ-ի բյուջետային քաղաքականության առավել կարևոր խնդիր է տեղական եկամուտների կանխատեսելիությունը, որի լուծումը հնարավորություն կընձեռի ավելի լավ գնահատելու բյուջետային ծախսերի իրատեսական ծավալները: Այդ նպատակով՝ 2013-2016 թվականներին տեղական եկամուտների հավաքագրման աստիճանի բարձրացումը կլինի հարկաբյուջետային քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Համայնքային ծախսերի կառավարման արդյունավետությունը գնահատելիս ՏԻՄ-ն առաջնորդվելու է հետևյալ սկզբունքով.

 **տեղաբաշխման արդյունավետություն.**

Ծախսերը պետք է համահունչ լինեն ՏԻՄ-ի քաղաքականության գերակայություններին: Ճկուն ֆինանսական քաղաքականության և ընթացիկ մոնիտորինգի արդյունքում պետք է հնարավորություն ստեղծվի անցնելու դեպի առավել կարևորները՝ ցածր արդյունավետություն ունեցող ծրագրերից դեպի բարձր արդյունավետություն ունեցողները.

 **տեխնիկական արդյունավետություն.**

ՏԻՄ-ի համապատասխան բաժինները պետք է ապահովեն արդյունավետության առավելագույն հասանելի մակարդակ, որը պետք է իրականացվի տեղական և հանրապետական, առևտրային, ոչ առևտրական կազմակերպությունների հետ համագործակցության և համայնքի բնակչության առջև հաշվետու լինելու հենքի վրա:

 **ֆինանսների հասցեավորում և հասարակական կարծիքի կիրառում**

ՏԻՄ-ի ֆինանսատնտեսական գործունեությունը մշտապես պետք է բխի համայնքի բնակիչների շահերից և համահունչ լինի նրանց կենսական շահերին: Յուրաքանչյուր հաջորդող տարվա բյուջետային նախապատրաստական աշխատանքների իրականացմանը զուգընթաց պետք է իրականացվեն հասարակության կենսական շահերի ուսումնասիրություններ, որոնց արդյունքները պետք է արտացոլված լինեն բյուջեի նախագծում, դրանով իսկ ապահովելով համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարման ֆինանսատնտեսական ոլորտում:

| տարեթիվը | խնդիրը | Չափման միավոր | Կատարվելիք աշխատանքների ծավալը |
|---|---|---|---|
| 2013 | համայնքի բնակչության կենսական շահերի հետազոտություն | դրամ | 1.000.000 |
| 2014 | համայնքի բնակչության կենսական շահերի հետազոտություն | դրամ | 1.000.000 |
| 2015 | համայնքի բնակչության կենսական շահերի հետազոտություն | դրամ | 1.000.000 |
| 2016 | համայնքի բնակչության կենսական շահերի հետազոտություն | դրամ | 1.000.000 |

*ՆՊԱՏԱԿԸ*

*Գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակում*

Վանաձոր քաղաքի բնակչության բարեկեցության բարելավումն անհնարին է իրականություն դարձնել առանց համայնքում բիզնեսի զարգացման տեմպերի ավելացման: Այս տեսանկյունից տեղական ինքնակառավարման մարմինը պետք է ջանքեր գործադրի Վանաձոր քաղաքը արտաքին և ներքին ներդրողների համար հրապուրիչ դարձնելու և պատշաճ մակարդակով այն ներկայացնելու միջոցով: Համապետական ներդրումային և բիզնես միջավայրի զարգացմանն ուղղված քաղաքականությանը համահունչ պետք է միջազգային չափորոշիչներին համապատասխան մշակվեն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրեր: Զարգացման ծրագրի շրջանակում նախատեսվում է մշակել համայնքի զարգացման բիզնես ծրագիրը, որն իր մեջ ներառելու է բիզնեսի զարգացման հնարավոր ուղղությունների վերաբերյալ կոնկրետ ծրագրեր: Նախատեսվում է ուսումնասիրել համայնքի տնտեսական ներուժը, ի հայտ բերել խնդիրները և մշակել դրանց լուծման ուղիները: Կազմել համայնքի գերակա ոլորտների զարգացման ծրագրեր և այդ ծրագրերը ներկայացնել պետական կառույցներին, ներքին ու արտաքին ներդրողներին, գործարարներին: Մեծ ջանքեր են ներդրվելու Վանաձոր քաղաքը, որպես զբոսաշրջության և սպորտի զարգացած ենթակառուցվածքներ ունեցող համայնք դարձնելու ուղղությամբ:

| տարեթիվը | խնդիրը | Չափման միավոր | Կատարվելիք աշխատանքների ծավալը |
|---|---|---|---|
| 2013-2016 | Վանաձորի համայնքում բիզնեսի զարգացմանն ուղղված ներդրումային և ոլորտային բիզնես ծրագրի մշակում | դրամ | 5.000.000 |

# *ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ*

Առաջիկա չորս տարիներին քաղաքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Ճանապարհների փոսային և կապիտալ նորոգումներ, մայթերի կապիտալ նորոգում
- Ճանապարհների, անցումների, խաչմերուկների նշագծում
- Անձրևաջրատար համակարգի սպասարկում
- Անձրևաջրատար համակարգի բաց և փակ դիտահորերի նորոգումներ
- Կանաչ տարածքների սպասարկում
- Կամուրջների նորոգում
- Հենապատերի նորոգում
- Գետերի հուների մաքրում
- Փողոցների գիշերային լուսավորության համակարգի վերականգնում
- Փողոցների սանիտարական մաքրում
- Կենցաղային աղբահանություն
- Թափառող կենդանիների վնասազերծում
- Այգիների և պուրակների սպասարկում
- Գերեզմանատների սպասարկում
- Բնակչության խմելու ջրի մատակարարման բարելավում
- Համայնքի բնակչության համար շուրջօրյա խմելու ջրի մատակարարում
- Հեղեղատարների վերակառուցում
- Բնության և շրջակա միջավայրի պահպանություն:

***<u>Կենցաղային աղբահանություն</u>***

**<u>Նպատակը</u>** Աղբահանության տարբերակված համակարգում և վերամշակման համակարգ

**<u>Խնդիրները</u>**

- Տարբերակված աղբահանության համակարգի բացակայություն
- Բնակչության իրազեկության ցածր մակարդակ
- Համայնքի բնակչության սոցիալական ծանր վիճակ
- Աղբահանությունն իրականացնող կազմակերպությունների ոչ բարվոք իրավական վիճակ
- Նոր տիպի աղբարկղերի (փակ կափարիչներով) և աղբահանող մեքենաների բացակայություն
- Փոքր աղբարկղերի նվազ լինելը
- Աղբաթափման վայրի ոչ արդիական վիճակ
- Բազմաբնակարան շենքերում և մասնավոր սեկտորում աղբահանության նոր համակարգի բացակայություն:

**<u>Լուծման ուղիները</u>**

- Համայնքում տարբերակված աղբահանության ներդրման համար միջոցների ձեռնարկում
- Փակ կափարիչներով աղբամանների պատրաստման ձևերի մշակում՝ շրջակա միջավայրի մաքրությունը պահպանելու և աղբի տհաճ հոտից զերծ մնալու համար
- Փոքր աղբամանների պատրաստում և տեղադրում մայթերում
- Իրավաբանական անձնաց հետ աղբահանության նոր համակարգի մոդելի մշակում
- Աղբաթափման վայրի արդիականացման համար ֆինանսական միջոցների հայթայթում
- ԶԼՄ –ների և տպագիր նյութերի միջոցով համայնքային բնակչության իրազեկում

- Աղբահանության նոր մոդելների պիլոտային ծրագրերի մշակում և իրականացում
- Իրավաբանական և ֆիզիկական անձանց շրջանում պարբերաբար հետազոտական աշխատանքի իրականացում՝ խնդիրների բացահայտման և լուծման նպատակով
- «ԵՀՀԳ Արևելք, թափոնների կառավարում» տեխնիկական աջակցության տարածաշրջանային ծրագրի պահանջներին համապատասխան Վանաձոր քաղաքում ոչ օրինական և պահանջներին չհամապատասխանող թափոնների տեղադրման վայրերի ցանկի կազմում
- Միջազգային և ԵՄ ստանդարտներին համապատասխանող թափոնների դասակարգման ծրագրերի մշակում
- Թափոնների տեսակավորման ծրագրի մշակում
- Բազմաբնակարան շենքերի աղբամուղների արդի վիճակի վերանայում, բազմաբնակարան շենքերի աղբահանությունն ավելի բարձր մակարդակով սպասարկելու համար ծրագրերի մշակում
- Բնակչության կողմից աղբահանության համար չնախատեսված վայրերում աղբաթափման պատժամիջոցի վերաբերյալ մեթոդների մշակում

***<u>Սանիտարական մաքրում</u>***

**<u>Նպատակը՝</u>**

Համայնքի վարչական տարածքում առաջացած սանիտարական աղբի ժամանակին հավաքում և տեղափոխում, ձմեռային պաշտպանության պատշաճ իրականացում:

**<u>Խնդիրները՝</u>**

- Փողոցների ավլող–լվացող, ձնհավաք մեքենաների և դրանց համար անհրաժեշտ քիմիական նյութերի բացակայություն
- Տերևահավաք տեխնիկայի բացակայություն

**<u>Լուծման ուղիները</u>**

- Համապատասխան մեքենամեխանիզմների և քիմիական նյութերի ձեռքբերում
- Համագործակցություն տարբեր միջազգային կազմակերպությունների հետ:

***<u>Բնության և շրջակա միջավայրի պահպանություն</u>***

**<u>Նպատակը՝</u>**

Համայնքի վարչական տարածքի պահպանումը ջրերի, հողերի և շրջակա միջավայրի աղտոտումից

**<u>Խնդիրները՝</u>**

- Ոռոգման խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգի վիճակը, ջրի կորուստները
- Խմելու ջրի ավազանների վիճակը

**<u>Լուծման ուղիները՝</u>**

- Համապատասխան միջոցառումների մշակում և կիրառում
- Համագործակցություն տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների հետ
- Ֆինանսական միջոցների հայթայթում:

*Փողոցների ասֆալտապատում*

**Նպատակը՝** Համայնքի ներքաղաքային ճանապարհների բարեկարգ վիճակ

**Խնդիրները**

- Համայնքի ծայրամասային թաղամասերում ճանապարհների անանցանելի վիճակ
- Համայնքի մայթերի վատթար վիճակ
- Հասարակական տրանսպորտի համար նշանակություն ունեցող փողոցների ֆիզիկական մաշվածություն
- Ճանապարհների եզրաքարերի վատթար վիճակ:

**Լուծման ուղիները**

- Ծայրամասային թաղամասերում, նրբանցքներում, փակուղիներում ճանապարհների բարեկարգում
- Քաղաքի կենտրոնական հատվածներում, հասարակական տրանսպորտի երթևեկության համար նշանակություն ունեցող փողոցներում հիմնանորոգման աշխատանքների իրականացում
- Մայթերի հիմնանորոգում
- Ճանապարհների եզրաքարերի տեղադրում:

*Կանաչ տարածքների սպասարկում*

**Նպատակը՝** Կանաչ գոտիների ծավալը հասցնել բնակչության 1 շնչին ընկնող միջազգային նորմերին համապատասխան

**Խնդիրները՝**

- Ոռոգման ցանցերի բացակայություն
- Համայնքում առկա բազմամյա տնկիների հաշվառված չլինելը
- Համայնքում առկա կանաչ գոտիների մակերեսների սակավություն
- Բազմամյա տնկիների (հատկապես բարդիների) մեծ մասի հատման ենթակա լինելը
- Նոր ծաղկանոցների ստեղծման անհրաժեշտություն
- Գազոնների սանիտարական ոչ բարվոք վիճակ:

**Լուծման ուղիները՝**

- Ոռոգման ցանցի ստեղծում մասնավորապես քաղաքի կենտրոնական հատվածում
- Բազմամյա տնկիների հաշվառում
- Նոր տնկիների ձեռքբերում, ծառատունկերի իրականացում և հետևողականություն
- Պայքար ապօրինի ծառահատման դեմ
- Կանաչ գոտիների մակերեսի ավելացում 30%-ով
- Յուրաքանչյուր տարի 1000 հատ տնկիների ավելացում
- Բազմամյա տնկիների համար օրենսդրական միջոցառումների կիրառում:
- Չորացած ծառերի ակտավորում և հատում

- Նոր ծաղկանոցների ստեղծում, ծաղկապատման ավելացում 30% -ով:

***<u>Կամուրջներ՝</u>***

**<u>Նպատակը՝</u>** Քաղաքի բոլոր կամուրջների սեյսմակայուն և երթևեկելի վիճակում պահպանելը
տրանսպորտային 28 հատ
հետիոտն 30 հատ

**<u>Խնդիրները՝</u>**

- Գործարանային թիվ 1, 2, 3, 4 կամուրջների ոչ բարվոք վիճակ
- Հալաբյան կամրջի վթարային վիճակ
- Թումանյան հրապարակը Սանկտ Պետերբուրգի փողոցին կապող կամրջի վթարային վիճակ

**<u>Լուծման ուղիները՝</u>**

- Նշված կամուրջների նորոգում
- Հետիոտն կամուրջների շահագործում, ընթացիկ նորոգում և սպասարկում

***<u>Հենապատեր</u>***

**<u>Նպատակը՝</u>**
Ապահովել հասարակական տրանսպորտի անվտանգ երթևեկությունը, բնակարանների նկուղները զերծ պահել խոնավացումից՝ հետագա փլուզումներից խուսափելու համար:

**<u>Խնդիրները՝</u>**

*Ոչ բարվոք վիճակում են՝*

- Վանաձորի Բաղրամյան պողոտայի սկզբնամասի հենապատը
- «ՄԻԳ» հեռուստաընկերությանը հարակից թիվ 28 մանկապարտեզը և նույն ուղղությամբ շենքերն անջատող փողոցի հենապատը,
- Աղայան փողոցի հենապատը
- Զերկասի փողոցի հենապատը
- Զուխաջյան փողոցի հենապատը
- Փամբակ գետի հենապատը
- Գործարանային փողոցի տարբեր հատվածների հենապատեր
- Շիրակի խճուղու հենապատը:

**<u>Լուծման ուղիները՝</u>**

- Տարբեր կազմկերպություններից միջոցների հայթայթում՝ հենապատերի վերակառուցման աշխատանքների իրականացման համար

*Փողոցների գիշերային լուսավորության վերականգնում*

**Նպատակը՝** Համայնքի փողոցների գիշերային լուսավորության ամբողջական վերականգնում

**Խնդիրները**

- Համայնքի ծայրամասային փողոցների, նրբանցքների, փակուղիների լուսավորության բացակայությունը
- Էլ. էներգիայի խնայողության համակարգերի բացակայությունը

**Լուծման ուղիները**

- 2013-2016 թվականներին քաղաքի փողոցների 90% գիշերային լուսավորության վերականգնում
- Էլ. էներգիայի խնայողության համար նոր սարքավորումների և տեխնիկայի ձեռքբերում:

*Թափառող կենդանիների վնասազերծում*

**Նպատակը՝** Համայնքի տարածում թափառող կենդանիների թվաքանակի առավելագույն կրճատում

**Խնդիրները**

- Թափառող կենդանիների թվաքանակի աճը
- Վնասազերծման նոր համակարգի միջոցների բացակայությունը
- Տնային կենդանիների հաշվառման բացակայությունը և կենդանիներ խնաղող բնակիչների իրազեկման աշխատանքների բացակայությունը:

**Լուծման ուղիները՝**

- Վնասազերծման նոր միջոցների կիրառում
- Ընտանի կենդանիների խնամելու վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրում և տեղայնացում
- Թափառող կենդանիների վերացման վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրում և տեղայնացում:

*Գետերի հուների մաքրում*

**Նպատակը՝** Համայնքի վարչական տարածքում գետերի և գետակների՝ հեղեղներից և ձնհալներից պաշտպանվածություն

**Խնդիրները՝**

- Գետերի հուների չպաշտպանված լինելը կենցաղային, շինարարական աղբից և կոշտ թափոններից
- Գետերի հուների անբավարար մաքրման պատճառով ավազի արտահոսք դեպի քաղաքի այլ տարածքներ

- Գետերի հուներում արգելապատնեշների ոչ բավարար առկայությունը, հեղեղատների վատ վիճակը:

**Լուծման ուղիները՝**

- Տեխնիկայի ձեռքբերում
- Շինարարական և կոշտ թափոններ թափող ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ պատժամիջոցների մշակում և կիրառում
- Համապատասխան միջոցառումների մշակում՝ գետերի հուներում արգելապատնեշների, հեղեղատների կառուցման և վերանորոգման ուղղությամբ:

*ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐ*

**Նպատակը՝** Նոր գերեզմանների համար հողհատկացում

**Խնդիրները՝**

- Համայնքում առկա գերեզմանների վիճակը

**Լուծման ուղիները՝**

- Նոր հողհատկացումներ գերեզմանատների համար
- Գերեզմանատների սպասարկում
- Զոհված ազատամարտիկների գերեզմանների նորոգում և խնամք

*Սողանքավտանգ գոտիների ամրացում*

**Նպատակը՝** Ապահովել քաղաքի սողանքավտանգ հատվածներում բնակվող բնակիչների անվտանգությունը

**Խնդիրները՝**

- Համապատասխան մասնագետների պակասը
- Լրացուցիչ հետազոտման կարիքը
- Կանաչ գոտիների վերականգնման պահանջը
- Անտառապաշտպան գոտիների վերականգնում

**Լուծման ուղիները՝**

- Ձնհալից պաշտպանվելու ուղիների որոնում, մասնագետների ընդգրկում այդ աշխատանքների իրականացման համար.
- Սողանքավտանգ գոտիներում ծառապատ անտառային գոտիների վերականգնում
- Աշխատանքներ միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու համար:

*Ճանապարհների նշագծում*

**Նպատակը՝** Ապահովել քաղաքի տրանսպորտային և հետիոտն անվտանգ երթևեկությունը:

**Խնդիրները՝**

- Քաղաքի ոչ բոլոր փողոցների նշագծված լինելը:

**Լուծման ուղիները՝**

- Անցումների, խաչմերուկների և փողոցների նշագծումը որակյալ ներկով
- Նոր նշագծող մեքենայի ձեռքբերում:

*Անձրևաջրատար համակարգի սպասարկում*

**Նպատակը՝** Ապահովել համայնքի բաց և փակ անձրևաջրատար համակարգի գործող աշխատանքային վիճակը

**Խնդիրները՝**

- Թեք ճանապարհներին ավազընդունիչ հորերի բացակայությունը
- Բաց և փակ դիտահորերի վիճակը
- Դիտահորերի կափարիչների գողանալու դեպքերը և կափարինրեի բացակայությունը

**Լուծման ուղիները՝**

- Թեք ճանապարհների վրա ավազընդունիչ հորերի տեղադրումը՝ հորդ անձրևների ժամանակ տիղմի և ավազի մուտքը գլխավոր փողոցներ կանխելու համար
- Անձրևաջրատար համակարգի բաց և փակ դիտահորերի նորոգումը
- Անձրևաջրատար դիտահորեր չունեցող փողոցների գրանցումը, կափարիչների պատրաստումը և տեղադրումը,
- Անձրևաջրատար դիտահորերի կափարիչներ գողացող քաղաքացիներին համապատասխան պատժամիջոցի ենթարկելը:

*Այգիների և պուրակների սպասարկում*

**Նպատակը՝** Ապահովել քաղաքի այգիների պատշաճ սպասարկումը, բնակիչների հանգստի վայրերում սպասարկման բարձր մակարդակը

**Խնդիրները՝**

- Վարձակալների անբարեխիղճ վերաբերմունքը
- Այգիների սանաիտարահիգիենիկ վիճակը
- Այգիներում կանաչ գոտիների սպասարկման վիճակը:
- Հասարակական զուգարանների պակասը

**Լուծման ուղիները՝**

- Այգիների վարձակալների հետ կնքված պայմանագրերի վերանայում պայմանագրի կետերի խախտման դեպքում պայմանագրի լուծարում, նոր վարձակալների հետ պայմանագրերի կնքում
- Այգիների սանիտարական վիճակի վերահսկողություն
- Հասարակական նոր զուգարանների կառուցում
- Այգիների կանաչ գոտիների սպասարկում, ծաղկապատում, ծառերի էտում, ձևավորում

# ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

1. *Բաժնի գործունեության հիմնական ոլորտները*

- Քաղաքաշինական փաստաթղթերի (գլխավոր հատակագիծ, թաղամասերի գոտիավորման և կառուցապատման նախագծեր) պատվիրում և դրանց անշեղորեն իրագործում:
- Համայնքի տարածքում կառուցապատողների քաղաքաշինական փաստաթղթերի նախապատրաստում և հաստատում:
- Համայնքային հողերի աճուրդային վաճառքի և կառուցապատման իրավունքի մրցույթի գործընթացների նախապատրաստում և իրականացում:
- Ինքնակամ կառույցների հաշվառում, օրինականացում և տնօրինում:

2. Յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրների նկարագրում և դրանց լուծման ուղիները նաև ֆինանսական միջոցների վերաբերյալ հիմնավորված տեղեկատվություն

| N | նպատակ (ներ) | խնդիր (ներ) | ծավալ կամ քանակ | լուծման ծրագիր (ներ) ըստ տարիների | ֆինանսներ | արդյունք (ներ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակում | | | 2013թ.<br>2014թ. | 5 մլն. դրամ<br>5մլն. դրամ | |
| 2 | 2013-2016թթ. քաղաքի կենտրոնի բեռնաթափում, ծայրամասային թաղամասերի զարգացում և քաղաքի ընդհանուր համաչափ զարգացում | Բազում թաղամասի գոտիավորման նախագծի պատվիրում | 100հա | 2013-2016թթ | 10 մլն. դրամ | |
| 3 | | Կենտրոն թաղամասի գոտիավորման նախագծի պատվիրում | 400հա | 2013-2016թթ | 25 մլն. դրամ | |
| 4 | | Խնձորուտ թաղամասի գոտիավորման նախագծի պատվիրում | 80հա | 2013-2016թթ | 8.5 մլն. դրամ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | Համայնքի քաղաքաշինական կենսագործունեության կարգավորում | Համայնքային ենթակայության կառույցների նորոգում և ամրացում | | 2013-2016թթ | | |
| 6 | Բնակարանային և հասարակական սպասարկման մակերեսների ավելացում | Կիսակառույց շինությունների ավարտման աշխատանքներ | | 2013-2016թթ | | |
| 7 | | Նոր բնակելի և հասարակական շինությունների կառուցում | | 2013-2016թթ | | |
| 8 | Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի աշխատանքի արդյունավետության բարձրացում | Մասնագիտական գույքի, գործիքների և սարքավորումների ձեռքբերում | | 2013-2016թթ | 4 մլն. դրամ | |
| 9 | Քաղաքի գլխավոր 3 մուտքերի ձևավորում | Քաղաքի արտաքին տեսքի բարելավում | 3 | 2013-2015թ.թ. | | |
| 10 | Հանրային զուգարանների կառուցում | Բնակչության կենսական կարիքների ապահովում | | 2013-2015թ.թ. | | |

### *3.Ինքնակամ կառույցների օրինականացում և տնօրինում*

Առաջիկա չորս տարիներին քաղաքում ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Ինքնակամ կառույցների հաշվառում, օրինականացում և տնօրինում
2. Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների հաշվառում և օրինականացում
3. Մասնագիտական գույքի, գործիքների և սարքավորումների ձեռքբերում.

| | |
|---|---|
| 2013թ. | 3 մլն դրամ |
| 2014թ | 3 մլն դրամ |
| 2015թ. | 3 մլն դրամ |
| 2016թ | 3 մլն դրամ |

# ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Վանաձորի քաղաքապետարանի կրթության և մշակույթի բաժնի ենթակայությամբ գործում են երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի 7 դպրոց, 3 մշակույթի տուն, 3 թատրոն, 2 թանգարան, 3 գեղարվեստական կատարողական համույթներ, գրադարանային համակարգ՝ 8 գրադարաններով:

*1. Օպտիմալացում*

Ոլորտի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու, ֆինանսական միջոցներն արդյունավետ օգտագործելու համար առաջարկվում է կատարել հետևյալ կառուցվածքային փոփոխությունները.

1.Թիվ 1 երաժշտական դպրոցի հիմնանորոգված շենքում գործող Էդ. Կզարթմյանի անվան (թիվ 1), Շարա Տալյանի անվան (թիվ 2) երաժշտական և պարարվեստի դպրոցները միավորել մեկ դպրոցի մեջ և այն վերակազմավորել որպես Էդվարդ Կզարթմյանի անվան արվեստի դպրոց:

*2 Կապիտալ շինարարություն և վերանորոգում*

1. Թիվ 4 երաժշտական դպրոցի վերանորոգում, գազաֆիկացում, ջեռուցման համակարգի տեղադրում –2013-2014թթ.
2. Թիվ 1 մշակույթի տան վերանորոգում – 2013-2014թ.
3. Թիվ 2 մշակույթի տան վերանորոգում, գազաֆիկացում, ջեռուցման համակարգի տեղադրում – 2014թ.:
4. Թիվ 3 մշակույթի տան դահլիճի տանիքի վերանորոգում, գազաֆիկացում, ջեռուցման համակարգի տեղադրում 2014-2015թթ.
5. Վերանորոգման աշխատանքներ, գազաֆիկացում, ջեռուցման համակարգերի տեղադրում, տեխնիկական միջոցների հատկացում (համակարգիչներ, պատճենահանման սարքեր) Հրանտ Մաթևոսյանի անվան գրադարանային համակարգի բոլոր մասնաճյուղերում – 2014-2016թթ., Մկրտիչ Սարգսյանի անվան մանկական գրադարանում (թիվ 3) - 2013թ.
6. Կերպարվեստի թանգարանի վերանորոգում, ջեռուցման համակարգի տեղադրում – 2013թ.
7. Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատի ոչ արդյունավետ աշխատող կաթսայատան փոխարինում նորով – 2014-2015թթ.
8. Տիկնիկային թատրոնի վերանորոգում, ջեռուցման համակարգի անցկացում - 2014թ.:

## *3 Գույքի ձեռքբերում* ( 2013-2016թթ.)

*Երաժշտական դպրոցների համար՝*

1. Աշակերտական սեղան-նստարաններ (200 հատ)
2. Երաժշտական գործիքներ (ժող. նվագարաններ, ջութակներ, դաշնամուրներ, ռոյալներ)
3. Երաժշտական գրականություն

*Մշակույթի տների, թատրոնների, գեղարվեստական կատարողական համույթների համար* **(2013-2016թթ.)**

1. Գրասեղաններ, պահարաններ, աթոռներ,

2. Բեմական հագուստներ,

3. Էլեկտրոնային սարքավորումներ՝ ուժեղացուցիչ, բարձրախոս, միկրոֆոն, և այլն,

4. Ոլորտի աշխատողների աշխատավարձերի բարձրացում

5. Գրքերի հրատարակչության աջակցություն (յուրաքանչյուր տարի 1-3 գրքի),

6. Ցուցահանդեսների, ստեղծագործական ցերեկույթների կազմակերպում (յուրաքանչյուր տարի 7-8 միջոցառում),

7. Փառատոնների, մրցույթների կազմակերպում (յուրաքանչյուր տարի թվով 2-3միջոցառում),

8. Ստեղծագործական կոլեկտիվներին և անհատներին հանրապետական և միջազգային փառատոն - ստուգատեսների մասնակցելուն աջակցություն (տարեկան 4-5 անգամ),

9. Կրթության, մշակույթի, արվեստի և գրականության ոլորտի մարդկանց նյութական աջակցություն և խրախուսում,

10. Տոների մասսայական միջոցառումների կազմակերպում,

11. Բարեգործական միջոցառումների (համերգ, ներկայացում) կազմակերպում զինվորների, սոցիալապես անապահով խավերի, հաշմանդամների, ծերերի, ծնողազուրկ երեխաների համար:

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Համայնքում գործում են թվով 20 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 305 աշխատողների և 1961 երեխաների թվով: Նախադպրոցական ուսումնական հաստատություններից 16-ը քարաշեն են, 4-ը՝ տնակային:

2013-2016թթ. բյուջեի միջոցների գումարներն օգտագործել կրթադաստիարակչական մեթոդների կատարելագործման, կադրերի վերապատրաստման, ֆիզկուլտուրայի գույքի և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերման, մանկապարտեզների համար կոշտ և փափուկ գույք, ինչպես նաև խոհանոցային սարքավորումներ գնելու նպատակով, մանկապարտեզի բակերի կարգավորման և խաղահրապարակների կառուցման ուղղությամբ:

Համագործակցել պետական և միջազգային կազմակերպությունների հետ՝ համատեղ ներդրմամբ շինությունների կապիտալ և ընթացիկ վերանորոգման, ջեռուցման համակարգերի անցկացման աշխատանքների իրականացման նպատակով:

| | | |
|---|---|---|
| Թիվ 2 ՆՈՒՀ | նոր խմբի բացում | 2013թ. |
| Թիվ 3 ՆՈՒՀ | շենքի կառուցում | 2013 - 2016թթ. |
| Թիվ 4 ՆՈՒՀ | շենքի կառուցում | 2013-2016թթ. |
| Թիվ 5 ՆՈՒՀ | նոր խմբի բացում, սպորտային դահլիճի և բակի բարեկարգում, ջրավազանի վերանորոգում, խաղահրապարակի կառուցում | 2013-14թթ |
| Թիվ 7 ՆՈՒՀ | շենքի վերանորոգում, բակի ցանկապատում, խաղահրապարակի կառուցում, գազաֆիկացում | 2014-2015թթ. |
| Թիվ 8 ՆՈՒՀ | շենքի կառուցում | 2013-2016թթ. |
| Թիվ 10 ՆՈՒՀ | շենքի վերանորոգում, միջնապատի կառուցում, բակի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում | 2014-2016թթ. |
| Թիվ 11 ՆՈՒՀ | շենքի վերանորոգում, բակի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում, գազաֆիկացում | 2013-2016թթ. |
| Թիվ 15 ՆՈՒՀ | նոր խմբի բացում, ջրագծի վերանորոգում, խաղահրապարակի կառուցում. | 2013-2014թթ |
| Թիվ 19 ՆՈՒՀ | նոր խմբի բացում, բակի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում, ցանկապատում | 2014թթ. |

| | | |
|---|---|---|
| Թիվ 24 ՆՈՒՀ | նոր խմբի բացում (2014թ.), ֆիզկուլտուրայի դահլիճի կառուցում, խաղահրապարակի կառուցում | 2013-2016թթ. |
| Թիվ 28 ՆՈՒՀ | ֆիզկուլտուրայի դահլիճի կառուցում, բակի բարեկարգում, ցանկապատում, խաղահրապարակի վերանորոգում | 2013-2016թթ. |
| Թիվ 30 ՆՈՒՀ | նոր խմբի բացում | 2014թ. |
| Թիվ 31 ՆՈՒՀ | նոր խմբի բացում, շենքի վերանորոգում, լողավազանի վերանորոգում, բակի բարեկարգում և խաղահրապարակի կառուցում | 2013թ. |
| Թիվ 32 ՆՈՒՀ | բակի բարեկարգում և  խաղահրապարակի կառուցում | 2014-2015թթ. |
| Թիվ 33 ՆՈՒՀ | շենքի հիմնանորոգում, թեք տանիքի կառուցում, լողավազանի վերանորոգում | 2013-2014թթ. |
| Թիվ 34 ՆՈՒՀ | նոր խմբի բացում, շենքի հիմնանորոգում, խաղահրապարակի և տանիքի կառուցում, գազաֆիկացում | 2013-2015թթ. |
| Թիվ 35 ՆՈՒՀ | նոր խմբերի բացում | 2013թ. |
| Թիվ 40 ՆՈՒՀ | շենքի վերանորոգում, բակի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում | 2014-2016թթ. |
| Թիվ 41 ՆՈՒՀ | նոր խմբի բացում, բակի բարեկարգում և խաղահրապարակի կառուցում | 2013-2014թթ: |

## *ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ*

*Նպատակը* - մարզական բարձր արդյունքների նվաճում և մասսայական սպորտի զարգացում

*Խնդիրները*

*1.Կապիտալ շինարարություն և վերանորոգում*

1. Ֆուտբոլի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ի մասնաշենքի և 2-րդ մարզադաշտի կառուցում /2013-2015թթ./:
2. <<Տարոն>> համալիր մարզադպրոց ՀՈԱԿ-ի շենքի կապիտալ վերանորոգում և մարզադպրոցին կից մարզադահլիճի /հավաքովի անզար/ և խաղահրապարակի կառուցում:
3. Ա.Ազարյանի անվան <<Կենտրոն>> համալիր մարզադպրոց ՀՈԱԿ-ի մարմնամարզության դահլիճի կառուցում, խաղադահլիճի հատակի հիմնանորոգում և լուսավորության ձևափոխում: Մարզադպրոցի լոկալ ջեռուցման համակարգի տեղադրում /2013-2016թթ./:
4. Օլիմպիական հերթափոխի մենապայքարային մարզաձևերի մարզադպրոց ՀՈԱԿ-ի /ՕՀՄՄՄԴ/ նորակառույց բռնցքամարտի դահլիճի ջեռուցման համակարգի ձեռքբերում և տեղադրում: Ըմբշամարտի դահլիճի և վարչական մասի վերանորոգում: Մարզադպրոցի արտաքին պատերի վերանորոգում, մուտքի ծածկի և 2-րդ հարկ բարձրացող աստիճանների ծածկի կառուցում /2013-2014թթ./:
5. Մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ի կապիտալ վերանորոգում: Մարզադպրոցի լոկալ ջեռուցման համակարգի տեղադրում/ 2013-2014թթ./:
6. Աթլետիկայի և ձմեռային մարզաձևերի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ի աթլետիկայի մարզասրահի վերանորոգում, վարժասրահի շենքի կառուցում, շոգեբաղնիքի, ցատկափոսի, ձմեռային ձևերի մասնաշենքի և կաթսայատան վերանորոգում /2015-2016թթ./:
7. Ծանրամարտի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ի մարզադահլիճի կապիտալ հիմնանորոգում /2013թ./:

8. Լողի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ը կարիք ունի բոլոր ուղղություններով վերանորոգման /լողավազանի օդափոխություն՝ մետաղական կոնստրուկցիաների կոռոզիացումը կանխելու համար, լողավազանի մետաղական կոնստրուկցիաների մաքրում և ներկում, համակարգը արևից և անձրևից պաշտպանելու համար օզոնային համակարգի համար շինության կառուցում /2013-2014թթ./:
9. Բոլոր մարզաբազաներում լուծել վերականգնողական միջոցների առկայությունը (շոգեբաղնիք, ցնցուղ, մերսման սենյակ և այլն) /2013-2016թթ./:
10. Վանաձոր քաղաքում մարզական 25 խաղահրապարակների /մարզահրապարակների հիմնում/ 2013-2016թթ/:
11. Վանաձորում առաջատար մարզաձևերի համապետական և միջազգային մրցաշարերի անցկացման համար շենքային և օժանդակ համակարգերի կայացում /2013-2016թթ./

*2. Մարզագույքի, մարզահագուստի և գույքի ձեռքբերում*

Բոլոր մարզադպրոցների համար ձեռք բերել վարժասարքեր, ըստ մարզաձևերի մարզահագուստ, մարզագույք՝

- ձյուդոյի տատամի
- ըմբշամարտի գորգեր, ներքնակներ
- բռնցքամարտի ռինգի ներքնակներ և ծածկոցներ
- ծանրաձողեր
- մարմնամարզական գործիքներ, պտտաձողեր, օղակներ, զուգափայտ, նժույգ, ցատկանժույգ, ցատկացանց
- հատուկ ինտերնետային շախմատներ
- բռնցքամարտի պարկեր
- վազքակոշիկներ, լեռնադահուկ, դահուկավազքի դահուկներ
- շվեդական պատեր
- թենիսի սեղաններ
- սուսերամարտի ժամանակակից էլ. մարզագույք և սպորտային հագուստ
- խաղային մարզաձևերի համար գնդակներ, խաղահագուստ, ցանցեր /հանդբոլի, վոլեյբոլի, ֆուտբոլի/
- մարզադպրոցները համալրել ժամանակակից համակարգիչներով և ինտերնետային կապով:

*3. Այլ կարևոր աշխատանքների հստակ կատարում*

- Ըստ մարզաձևերի քաղաքի բոլոր հավաքական թիմերի ուսումնամարզական հավաքների կազմակերպում, որ կնպաստի մարզական արդյունքների բարձրացմանը:
- Մարզադպրոցները համալրել բարձրագույն մասնագիտական կրթությամբ երիտասարդ մասնագետներով:
- Ներկայացնել առաջարկություն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն՝ մարզիկների և մարզիչների սննդի և գիշերավարձի հասանելիք գումարի չափը բարձրացնելու վերաբերյալ:
- Մարզիչ-մանկավարժների աշխատավարձի չափը հավասարեցնել հանրակրթական դպրոցներում աշխատող մանկավարժների աշխատավարձի չափին:
- Տարվա 10 լավագույն մարզիկներից ամենամյա նպաստ նշանակել ոչ միայն 5-ին,այլև՝ 10-ին և 5 լավագույն պատանի մարզիկներին:
- Վերականգնել ավանդական դարձած մի շարք մարզական մասսայական միջոցառումները:

- Վերականգնել Վանաձոր քաղաքի երբեմնի ունեցած ֆուտբոլային ավանդույթներով լի «Լոռի» վարպետների թիմը:
- Մեթոդական և ուսումնամարզական ձեռնարկների ձեռք բերում:

*Լուծման ուղիները* - պետական և համայնքային բյուջեից, ինչպես նաև ներդրումային ծրագրերի և ըստ մարզաձևերի ֆեդերացիաների նպատակային հատկացումներից վերը նշված աշխատանքների իրականացում:

# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ԲԱՇԽՈՒՄ

1.Բաժնի գործունեության ոլորտների ներկա իրավիճակի վերաբերյալ նկարագիրը

Բնակարանային ֆոնդի համակողմանի հաշվառում, զոհված և վիրավոր ազատամարտիկների կարիքավոր ընտանիքների հաշվառում, բնակարանների օտարման կարգով սեփականաշնորհում, երկրաշարժից բնակարանները կորցրած բնակարանի կարիքավոր ընտանիքների հաշվառում և փոխհատուցումների գործընթացի կատարում:
Բնակարանների հետ կապված այլ գործառույթների կատարում:

2. Յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրների նկարագրում և դրանց լուծման ուղիները նաև ֆինանսական միջոցների վերաբերյալ հիմնավորված տեղեկատվություն

| N | նպատակ /ներ/ | խնդիր /ներ/ | ծավալ կամ քանակ | լուծման ժամկետ | ֆինանսներ | արդյունք /ներ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ունենալ բնակֆոնդի վերաբերյալ ամբողջական տվյալներ | քաղաքի բազմաբնակարան շենքերի անձնագրավորում | 1054 շենք 26.216 բնակարանով | 2012-2013 | - | ունենալ քաղաքի անձնագրավորված բազմաբնակարան շենքերի հստակ համակարգչային բազա |
| 2 | 3-րդ կարգի վթարայնություն ունեցող շենքերի վերականգնման ժամանակ ունենալ հստակ տվյալներ | 3-րդ կարգի վթարայնություն ունեցող շենքերիվերաբերյալ ստեղծել առանձին համակարգչային բազա | 84 շենք 3280 բնակարանով | 2013 | - | 3-րդ կարգի վթարայնության շենքերի վերաբերյալ անձնագրեր /ամբողջական/ |
| 3 | ունենալ սեփականաշնորհված բնակարաններ | ավարտել համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանների օտարման գործընթացը | 1040 բնակարան | 2012-2013 | - | ունենալ սեփականաշնորհված բնակարաններով բազմաբնակարան շենքեր |

# ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նախատեսված է միջոցառումներ իրականացնել՝

- Բարձրացնել բազմաբնակարան շենքերի սեփականատերերի իրազեկումը՝ շենքի կառավարման խնդիրների վերաբրյալ
- Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների աշխատանքն ավելի թափանցիկ դարձնել.
- Գտնել դոնոր կազմակերպություններ բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների և գույքի հիմնանորոգման աշխատանքներում կառավարման մարմիններին ֆինանսական ներդրումներով աջակցելու համար:

2013-2016թթ քառամյա ծրագրում նախատեսվող ներդրումներ

ա) Բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքներ՝ 400 մլն (չորս հարյուր միլիոն ) դրամ
բ) Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի հիմնանորոգման աշխատանքներ՝ 60 մլն (վաթսուն միլիոն) դրամ
գ) Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման աշխատանքներ՝ 60մլն (վաթսուն միլիոն) դրամ
դ) Վանաձորի խաղահրապարակների, խաղային սարքավորումների նորոգման, կառուցման և բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատման աշխատանքներ՝ 200 մլն (երկու հարյուր միլիոն) դրամ.
ե) Բազմաբնակարան շենքերի ներքին ընդհանուր օգտագործման ջրագծերի և կոյուղագծերի հիմնանորոգման աշխատանքներ՝ 80 մլն (ութսուն միլիոն) դրամ:
զ)Վ.Համբարձումյան փ.թիվ 8 բազմաբնակարան շենքի 1-3 հարկերի վերակառուցում՝ ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարանով ապահովելու նպատակով

2.«Վանաձորի բազմաբնակարան շենքեր և բակեր» հիմնադրամին նպատակային ֆինանսական աջակցություն՝ 4 մլն ( չորս միլիոն) դրամ:

2013-2016 թթ քառամյա ծրագրում  բազմաբնակարան շենքերում նախատեսվող աշխատանքների

ՑԱՆԿ

| Նախատեսվող աշխատանքների անվանումը | Ամբողջը | Համայնքային ներդրում /միլիոն դրամ/ | | | | | ՀՀ կառավարության և այլ դոնոր կազմակերպությունների ներդրում /միլիոն դրամ/ | | | | | Բազմաբնակարան շենքերի սեփականատերերի ներդրում /միլիոն դրամ/ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2013թ. | 2014թ | 2015թ | 2016թ | Ընդ. | 2013թ. | 2014թ. | 2015թ. | 2016թ. | Ընդ. | 2013թ. | 2014թ. | 2015թ. | 2016թ. | Ընդ. |
| Բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքներ | 400 մլն | 10 | 10 | 10 | 10 | 40 մլն | 75 | 75 | 75 | 75 | 300 մլն | 15 | 15 | 15 | 15 | 60 մլն |
| բազմաբնակարան շենքերի շքամուտքերի հիմնանորոգման աշխատանքներ | 60 մլն | 1.5 | 1.5 | 1.5 | 1.5 | 6 մլն | 10.5 | 10.5 | 10.5 | 10.5 | 42 մլն | 3 | 3 | 3 | 3 | 12 մլն |
| բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման աշխատանքներ | 60 մլն | 2 | 2 | 2 | 2 | 8 մլն | 10.5 | 10.5 | 10.5 | 10.5 | 42 մլն | 3 | 3 | 3 | 3 | 12 մլն |
| խաղահրապարակների, խաղային սարքավորումների նորոգման, կառուցման և բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատման աշխատանքներ | 200 մլն | 5 | 5 | 5 | 5 | 20 մլն | 45 | 45 | 45 | 45 | 180 մլն | — | — | — | — | — |
| բազմաբնակարան շենքերի ներքին ընդհանուր օգտագործման ջրագծերի և կոյուղագծերի հիմնանորոգման աշխատանքներ | 80 մլն | 2 | 2 | 2 | 2 | 8 մլն | 10 | 10 | 10 | 10 | 10 մլն | 8 | 8 | 8 | 8 | 32 մլն |
| <<ՎԲԾԲ>> հիմնադրամին նպատակային ներդրում | 4 մլն | 1 | 1 | 1 | 1 | 4 մլն | — | — | — | — | — | — | — | — | — | |

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
# ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

## ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

**Վանաձորի համայնքի 2013-2016թթ. եկամտային մասով ըստ տեսակների ենթադրվում է հետևյալ մուտքերը.**

### *Հարկային եկամուտներ*

*1. Հողի հարկ*

Համայնքի տարածքում ըստ մեզ հաշվառված են հողի հարկի գծով հարկատու համարվող 318 իրավաբանական անձինք, որոնց 1 տարվա հարկային պարտավորությունները կազմում են 17700100 դրամ, հասարակական և արտադրական նշանակության 1616 հողի հարկատու ֆիզիկական անձինք, որոնց մեկ տարվա հողի հարկի գծով հարկային պարտավորությունները կազմում են 4960400 դրամ, ինչպես նաև հողի հարկի գծով բնակելի նշանակության հողամասերի համար 8554 ֆիզիկական անձինք, որոնց 1 տարվա հարկային պարտավորությունները կազմում են 16995000 դրամ:

Այսպիսով՝ հողի հարկի գծով 1 տարվա հարկային պարտավորությունները բոլոր հարկատուների կողմից կազմում է ընդամենը 39655400 դրամ: Հաշվի առնելով վերը նշվածը, նպատակահարմար է հողի հարկի գծով 2013թ.-ի համար նախատեսել 43490000 դրամ եկամուտ, իսկ 2013-2016թթ-ի ընթացքում յուրաքանչյուր բյուջետային տարում՝ համապատասխանաբար տարեկան 10% աճ:

*2. Գույքահարկ*

Գույքահարկի հաշվառումներով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ ունեն 608 իրավաբանական անձինք, որոնց անշարժ գույքի և փոխադրամիջոցների 1 տարվա հարկային պարտավորությունները կազմում են 71305600 դրամ: Հասարակական արտադրական նշանակության օբյեկտների հարկային պարտավորությունների գծով հաշվառված է 1635 ֆիզիկական անձինք, որոնց գույքահարկի գծով 1 տարվա հարկային պարտավորությունները կազմում են 34857200 դրամ: Ֆիզիկական անձանց բնակելի նշանակության անշարժ գույքի գծով հաշվառված է 8901 հարկատու, որոնց 1 տարվա հարկային պարտավորությունները կազմում են 19364100 դրամ: Ֆիզիկական անձանց փոխադրամիջոցների գծով հաշվառված են 12885 փոխադրամիջոց, որոնց 1 տարվա հարկային պարտավորությունները գույքահարկի գծով կազմում են 152027100դրամ:

Այսպիսով՝ գույքահարկի գծով 1 տարվա հարկային պարտավորությունները բոլոր հարկատուների կողմից կազմում են ընդամենը 293039515 դրամ:

### *Տուրքերի գծով՝*

*3. Պետական տուրքեր.*

Հաշվի առնելով ընթացիկ տարվա և նախորդ տարիների մուտքերը՝ նշված ուղղությամբ ակնկալվում է 30 մլն դրամ մուտք, որից՝

ա/ քաղաքացիական կացության ակտերը գրանցելու գծով 5 մլն դրամ,

բ/ նոտարական գրասենյակների կողմից ծառայություններ կատարելու գծով 25 մլն դրամ:

Պետական տուրքերի գծով մուտքերը հիմնականում առաջանում են նոտարական գրասենյակի գործարքներից և հետագա տարիների մուտքերը նախապես հնարավոր չէ կանխատեսել:

*4. Տեղական տուրքեր.*

2013թ. համար տեղական տուրքերի սպասվելիք եկամուտները ըստ տեսակների հետևյալն են՝

4.1 Ոգելից խմիչքի վաճառք Վանաձոր համայնքի տարածքում ընթացիկ տարվա ընթացքում իրականացնում են 220 օբյեկտ: Քանի որ 2013թ.-ի համար մեր կողմից առաջարկվում է ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության դրույքաչափ սահմանել եռամսյակը՝ 15000 դրամ (տարեկան 60000 դրամ), ուստի կանխատեսվում է տվյալ ուղղությամբ 2013թ.-ին ունենալ 13 200 000 դրամ եկամուտ,

4.2 Ծխախոտի վաճառք Վանաձորի համայնքի տարածքում ընթացիկ տարվա ընթացքում իրականացնում են 210 օբյեկտ: Տվյալ ուղղությամբ առաջարկվում է վաճառքի թույլտվության դրույքաչափ սահմանել եռամսյակը՝ 15000 դրամ (տարեկան 60000 դրամ), և առաջարկվում է տվյալ ուղղությամբ 2013թ.-ին ունենալ 12 600 000 դրամ եկամուտ:

4.3. Հեղուկ վառելիքի կամ տեխնիկական հեղուկների կամ կոմպրեսացված (սեղմված) բնական գազերի կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի վաճառքի թույլտվության 2013թ.-ի համար տեղական տուրք է սահմանվում տարվա համար՝ 220.000 դրամ:

Վանաձոր համայնքի տարածքում հեղուկ վառելիքի կամ տեխնիկական հեղուկների կամ կոմպրեսացված (սեղմված) բնական գազերի կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի վաճառքով զբաղվող մշտական գործող օբյեկտների քանակը 31-ն է, և տվյալ ուղղությամբ առաջարկվում է 6 820 000 դրամ եկամուտ, որից է

ա/ հեղուկ վառելիքի և տեխնիկական հեղուկների վաճառքով համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար վաճառք են իրականացնում 21 օբյեկտ, որից նախատեսվում է 4 620 000 դրամ եկամուտ,

բ/ կոմպրեսացված (սեղմված) բնական գազերի կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի ընթացիկ տարվա համար համայնքի տարածքում վաճառք են իրականացնում 10 օբյեկտ, որից նախատեսվում է 2 200 000 դրամ եկամուտ:

4.4. Մարդատար տաքսի ծառայության 2013թ.-ին առաջարկվում է տեղական տուրք. յուրաքանչյուր ավտոմեքենայի համար՝ տարեկան 15.000 դրամ:

Համայնքի տարածքում տաքսի ծառայություն մատուցող կազմակերպությունները և անհատական գործող տաքսիների քանակը 215-ն է:

2013թ.-ի համար համապատասխանաբար նախատեսվում է եկամուտ՝ 3 225 000 դրամ:

4.5. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերից մանրածախ առևտրի թույլտվության համար նախատեսվում 2013թ.-ի տեղական տուրքի դրույքաչափ՝ տարեկան 60 000 դրամ:

Համայնքի տարածքում կա նման կարգի 45 առևտրի կետեր, որոնցից նախատեսվում է տեղական տուրք՝ 2 700 000 դրամ:

4.6. Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության 2013թ.-ի համար առաջարկվում է տեղական տուրքերի դրույքաչափերը թողնել նույնը.

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1812քմ և մուտք՝ 1 812 000 դրամ,

բ/ այլ արտաքին գովազդի համար՝ տարեկան 8576քմ և մուտք՝ 8 576 000 դրամ,

գ/ թունդ ալկոհոլային(սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 864քմ և մուտք՝ 2 160 000 դրամ,

դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 864քմ և մուտք՝ 604 800 դրամ:

4.7 Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար 2013թ.-ին տեղական տուրք է սահմանվել տարեկան 40000 դրամ: Համայնքի տարածքում նմանատիպ գործունեություն են իրականացնում 52 օբյեկտ, որից կանխատեսվում է 2080000դրամ եկամուտ:

Ընդհանուր կանխատեսվում է ըստ համայնքի տարածքում առկա գովազդային վահանակների չափերի՝ 12116քմ գովազդային պաստառներ, որոնց ընդհանուր տարվա համար առաջարկվում է նախատեսել մուտք՝ 13 152 800 դրամ:

### *5. Ոչ հարկային եկամուտներ , այդ թվում՝*

ա/ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից,

բ/ համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի վարձակալության և օգտագործման վարձավճարներից:

Ներկա դրությամբ համայնքի տարածքում կա վարձակալությամբ տրված 46 անշարժ գույք, 3 շարժական գույք, որոնց տարեկան վարձավճարի ընդհանուր գումարը կազմում է 7 600 000 դրամ, ուստի առաջարկվում է տարվա մուտք՝ 7 600 000 դրամ:

Վանաձոր համայնքի տարածքում վարձակալությամբ տրված են 112 հողատարածքներ խանութ-տաղավարների համար, 249 տարբեր նշանակության տարածքներ և 2617 ավտոտնակներ, որոնց տարեկան վարձավճարը կազմում է 24 750 200 դրամ, ինչպես նաև 820 300 դրամ ապառք, սակայն տարվա ընթացքում հաշվառված վարձակալված հողատարածքների մոտ 10%- ը վարձակալների կողմից ենթակա է սեփականաշնորհման, որից հետո վարձավճարներ չեն գանձվի: Սակայն այդ ընթացքում կառաջանան նոր վարձակալներ:

Հաշվի առնելով վերը նշվածները՝ 2013թ.-ին նշված ուղղությամբ ակնկալվող եկամուտի գումարը կկազմի 25 000 000 դրամ:

## *6. Աղբահանության գծով*

Վանաձոր համայնքի տարածքում հաշվառված է շուրջ 105 000 բնակիչ, փաստացի՝ 97 000 բնակիչ:

Համայնքի տարածքում աղբահանության ծառայության մատուցման պատվիրատու է հանդես գալիս Վանաձորի քաղաքապետարանը: Աղբահանության ծառայությունից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են վճարել աղբահանության վարձավճարներ՝ ըստ Վանաձորի համայնքի ավագանու կողմից հաստատված սակագների և կնքված պայմանագրերի: Ինչ- ինչ պատճառներով աղբահանության ծառայությունից չօգտված, սակայն համայնքի բնակիչ համարվող ֆիզիկական անձինք համապատասխան հիմնավոր փաստաթղթեր ներկայացնելու դեպքում ազատվում են աղբահանության վարձավճարներից:

Աղբահանության վարձավճարների գծով միայն 2012թ.-ի ընթացքում տարբեր պատճառներով համայնքի տարածքից բացակայելու և աղբահանության ծառայությունից չօգտվելու վերաբերյալ հիմնավոր փաստաթղթեր ներկայացնելու պատճառով կատարվել է վարձավճարների զրոյացում և վերահաշվարկ 5320 անձի վերաբերյալ 22 810 168 դրամի, բացի այդ ըստ մանրակրկիտ ուսումնասիրության՝ Վանաձորի համայնքի բնակիչ համարվող և աղբահանության վարձավճարների հաշվարկման բազայում ընդգրկված անձանց մասով պարզվել է, որ 6728 բնակելի տների և բնակարանների բնակիչներ 2012թ.-ի ընթացքում ամբողջ ընտանիքով՝ 20 148 անձ, ամբողջ տարին բացակայել են իրենց բնակության վայրից և չեն օգտվել աղբահանության ծառայությունից, և նշված անձանց մասով հաշվարկված վարձավճարները ևս ենթակա են վերահաշվարկման և զրոյացման:

Բացի այդ, շուրջ 2500 անձ նույնպես ժամանակավորապես բացակայում են բնակության վայրից (տարբեր ընտանիքներից մասնակի 1 կամ 2 անձ), որոնց վերաբերյալ դեռ չեն ներկայացվել հիմնավոր փաստաթղթեր, սակայն հետագայում ենթակա են վերահաշվարկման:

Աղբահանության գծով ըստ վերը կատարված վերլուծությունների՝ 2013թ.-ի ընթացքում Վանաձորի համայնքի տարածքում մշտական կարող են ներկա գտնվել և աղբահանության ծառայությունից օգտվել ընդամենը 77 000 բնակիչ (77 000 x 150 x 12 = 138 600 000) և հաշվառված 1843 հասարակական սպասարկման գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների 1 ամսվա վարձավճարի թիվը կազմում է 2 430 000դրամ, տարեկանը՝ 2 430 000 x 12 = 29 160 000դրամ, ընդամենը տարեկան՝ 29 160 000 դրամ + 138 600 000 դրամ = 167 760 000 դրամ:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ աղբահանության վարձավճարների գծով առաջարկվում է 2013թ. բյուջեում նախատեսել 167 760 000 դրամ:

# ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ՆԱԽԱԲԱՆ*

Համայնքի զարգացման բոլոր հնարավոր ուղիները շատ դժվար է իրականություն դարձնել, առանց իրատեսական և երկարաժամկետ արդյունավետություն ունեցող ծրագրերի: Տեղական ինքնակառավարումը կոչված լինելով լուծելու համայնքի առջև ծառացած խնդիրները պետք է մշակի և կյանքի կոչի այնպիսի ծրագրեր, որոնք համահունչ են առկա մարտահրավերներին, արտացոլում են հասարակության զգալի մասի պահանջները և իրատեսական են պահանջվող ֆինանսական միջոցների արդյունավետության տեսանկյունից:

*ՆՊԱՏԱԿԸ*

Մշակել և կյանքի կոչել համայնքի տարբեր բնագավառների զարգացմանն ուղղված ծրագրեր:

*ԽՆԴԻՐՆԵՐԸ*

- Քաղաքապետարանի կողմից իրականացվող բոլոր աշխատանքների վերաբերյալ տեղեկատվական բազայի հրատապ անհրաժեշտություն
- Քաղաքապետարանի կողմից կատարված ծրագրերի և աշխատանքների տարեկան հաշվետվության համակարգի ներդրման կարևորություն:

*ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ*

Առաջիկա չորս տարիների ընթացքում բաժինը ձեռնամուխ է լինելու քաղաքապետարանի կողմից իրականացվելիք ծրագրերի մեծ մասի մշակմանը, արդիականացմանը և հետազոտմանն ու համապատասխան բաժինների միջոցով դրանց կյանքի կոչմանը:

## *Արտաքին հարաբերություններ*

*ՆԱԽԱԲԱՆ*

*Վանաձոր համայնքը համագործակցում է*

| *Պետություն* | *Քաղաք* | *Համագործակցության սկիզբ* |
|---|---|---|
| Ֆրանսիա | Բանյո | 1967թ. |
| ԱՄՆ | Փասադենա | 1992թ. |
| Չինաստան | Ցյուլչզոու | 2001թ. |
| ՌԴ | Պոդոլսկ | 2004թ. |
| ՌԴ | Կիսլովոդսկ | 2005թ. |
| Վրաստան | Բաթում | 2006թ. |
| Լեհաստան | Լոդձ | 2009թ. |
| Բելառուսիա | Վիտեբսկ | 2012թ. |

Վանաձորի և քույր քաղաքների միջև կնքվել են պայմանագրեր, համաձայն որոնց քույր քաղաքների միջև առկա է համագործակցություն մշակույթի, տուրիզմի, տնտեսության, կրթության, առողջապահության և սպորտի բնագավառներում:

Համայնքը սերտորեն համագործակցում է տարբեր միջազգային կազմակերպությունների հետ:

- «Կովկասյան քաղաքների ցանց» կազմակերպություն
- GIZ կազմակերպություն

Վանաձոր-Լայպցիգ քաղաքների արդյունավետ համագործակցությունից և Վանաձոր քաղաքի 2012-2022թթ. Զարգացման ծրագրից բխող գերակայություններից ելնելով 2013-2016թթ. համայնքի զարգացման համար որպես համագործակցության ոլորտներ ընտրել .

1. **Համայնքի տեղական տնտեսական զարգացմանն ուղղված գործունեություն**

- <<Վանաձորի տնտեսական զարգացման ռազմավարական կենտրոն>>-ի գործունեության խթանում, ինչը ենթադրում է փոխադարձ այցելություններ, կենտրոնի գործունեությանն ուղղված տեխնիկական և նյութական աջակցություն
- Վանաձորում գյուղմթերքների վերամշակման հնարավորությունների ուսումնասիրում, կարիքների և հնարավորությունների գնահատում, փորձի փոխանակման ծրագրեր, ներդրումային ծրագրերի մշակում և համատեղ ձեռնարկությունների ստեղծման հնարավորությունների ուսումնասիրում:

2. **Համայնքի աղբահանության համակարգի բարելավում**

- Ներկայումս Վանաձոր քաղաքում KFW բանկի և ՀՀ Տարածքային կառավարման նախարարության համագործակցության շրջանակներում աղբահանության ոլորտում իրականացվում են <<Կոշտ կենցաղային աղբի կառավարման համակարգ>>ին ուղղված ուսումնասիրություններ, որոնց արդյունքում մշակվելու է քաղաքում աղբահանության նոր համակարգ: Վանաձոր-Լայպցիգ համագործակցության շրջանակներում ցանկալի կլիներ համակարգի բարեփոխման իրականացման փուլում ստանալ Լայպցիգ քաղաքի փորձագիտական և տեխնիկական աջակցությունը(փոխադարձ այցելություններ, մասնագիտական խորհրդատվություններ, տեխնիկական աջակցություն):

3. **Համայնքում սպորտի և առողջ ապրելակերպի զարգացում**

- Համայնքի զարգացման ծրագրի գերակայությունների շրջանակներում մեծ դեր և նշանակություն ունի համայնքում սպորտի զարգացումը: Վանաձոր-Լայպցիգ համագործակցությունն այս ոլորտում նույնպես կարող է մեծապես նպաստել Վանաձորում առողջ ապրելակերպի և որոշ սպորտաձևերի զարգացմանը: Համագործակցության ընթացքում ակնկալվում է համատեղ ծրագրերի իրականացում, սպորտային համատեղ միջոցառումների իրականացում, ժամանակակից մարզախաղահրապարակային համալիրների կառուցման ծրագրերի իրականացաում

4. **Քաղաքի զարգացում**

- Համագործակցության շրջանակներում ակնկալվում է Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի և քաղաքի քաղաքաշինության զարգացմանն ուղված տեխնիկակական և փորձագիտական օժանդակություն, մասնագետների փոխադարձ այցելություններ, փորձի փոխանակման ծրագրեր:

*<u>ՆՊԱՏԱԿԸ</u>*

Զարգացնել Վանաձոր քաղաքի արտաքին հարաբերությունները քույր քաղաքների, տարբեր միջազգային կազմակերպությունների հետ:

*<u>ԽՆԴԻՐՆԵՐԸ</u>*

- Վանաձոր և քույր քաղաքների առկա համագործակցության մակարդակի և ոլորտների վերաբերյալ պատմական և տեղեկատվական բազայի ստեղծման անհրաժեշտություն
- Հայաստանում գործունեություն ծավալող միջազգային դոնոր կազմակերպությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվության համակարգման անհրաժեշտություն
- Միջազգային դոնոր կազմակերպությունների վերաբերյալ պարբերաբար տեղեկատվության հավաքագրման և նրանց հետ կոնտակտային կապերի ստեղծման անհրաժեշտություն

*<u>ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ</u>*

- Վանաձոր և քույր քաղաքների միջև առկա համագործակցության ամրապնդում և ընդլայնում, ներգրավելով համագործակցության նոր ոլորտներ: Վանաձորի

քաղաքապետարանը շարունակելու է սերտ համագործակցությունը բոլոր այն երկրների և քաղաքների հետ, որոնց հետ մինչ այս ձևավորվել են ջերմ և կառուցողական հարաբերություններ: Մեծ ուշադրություն է դարձվելու մշակութային, սպորտային, սոցիալական և տնտեսական համագործակցությանը: Շարունակաբար զարգացվելու են հարաբերությունները Բանյո, Բաթումի, Մաարդու, Վառնա, Փասադենա, Պոդոլսկ, Լոձ, Վիտեբսկ և այլ քաղաքների հետ:

- Հայաստանում գործունեություն ծավալող տեղական և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ անմիջական կապի ստեղծում և համատեղ ծրագրերի իրականացման վերաբերյալ քննարկումների իրականացում
- Հայաստանում գործունեություն չծավալող, սակայն այս տարածաշրջանի հետ դրամաշնորհային և այլ տիպի ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ կապի ստեղծում և համատեղ ծրագրերի իրականացմանն ուղղված գործունեության ծավալում:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Վանաձորի քաղաքապետարանը, գիտակցելով տուրիզմի զարգացման կարևորությունը, իր առջև խնդիր է դրել նպաստել տուրիզմի զարգացմանը:

Քաղաքում և հարակից համայնքներում տուրիզմի համար հետաքրքրություն ներկայացնող պատմական և մշակութային հուշարձանները, գեղատեսիլ վայրերը զուրկ են անհրաժեշտ հարմարություններից և ենթակառուցվածքներից: Այս իրավիճակը խոչընդոտ է հանդիսանում տուրիստական ուղևորությունների քանակի ավելացման համար և թույլ չի տալիս, որպեսզի տուրիզմի օգնությամբ համայնքում ստեղծվեն նոր աշխատատեղեր, և մեղմվի առկա սոցիալական ոչ բարվոք վիճակը:

Վանաձորը տուրիզմի բնագավառում զարգացած ենթակառուցվածքներ ունեցող մրցունակ համայնք դարձնելու համար նախևառաջ հարկավոր է նպաստել այդ միջավայրի կայացմանը՝ զանազան տեղական ու միջազգային ծրագրերի իրականացման միջոցով:

Վանաձորի քաղաքապետարանն այս ոլորտում առաջիկա չորս տարիների կտրվածքով անհրաժեշտ է համարում համագործակցել պետական և միջազգային այն բոլոր կառույցների հետ, որոնք իրենց գործունեությամբ կնպաստեն այս ոլորտում համայնքի կայացմանը:

Մասնավորապես կարևորվում է «Հայաստանում համայնքային տուրիզմի զարգացման և իրագործման» ռազմավարական ծրագրի շրջանակներում համագործակցությունը, ինչը կնպաստի համայնքում տուրիզմի զարգացմանը և այս ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծմանը: Ռազմավարական ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցել ՀՀ կառավարության, UNDP ՄԱԿ Զարգացման Ծրագրի, GSCE ԵԱՀԿ-ի, USAID/CAPS Նախագծի, World Bank-Armenia Համաշխարհային Բանկի, Եվրոպական Միության համապատասխան կառույցների հետ:

2012-2022թ.թ. Վանաձոր համայնքի զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակներում՝ Վանաձորը առողջարանային տուրիզմի քաղաք դարձնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

- Առողջարանային տուրիզմի զարգացման կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի և գործողությունների պլանի կազմում
- Առողջարանային համալիր կենտրոնի զարգացում
- Տուրիզմի զարգացմանը նպաստող ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների զարգացում
- Զբոսաշրջության և սպասարկման ոլորտի մասնագետների ուսուցման և վերապատրաստման կենտրոնի ստեղծում
- Տեղական «Լոռի» հանքային ջրի և աղբյուրի ջրի արտադրություն և առևտրային նշանի կայացում
- Տուրիստական տեղեկատվական, մշակութային, այցելուների սպասարկման կենտրոնի հիմնում
- Շրջակա վնասված անտառների վերականգնման կարճաժամկետ ու միջնաժամկետ ծրագիր և գործողությունների իրականացում
- Վանաձորի քարտեզի և տուրիստական ուղեցույցների հրատարակում
- Տուրիստական ենթակառուցվածքների զարգացում

# ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հիմնվելով քաղաքի աշխարհագրական դիրքի և առկա տնտեսական հզորությունների և ներուժի վրա՝ ջանքեր գործադրել Վանաձորը դարձնելու հյուսիսային Հայաստանի վարչատնտեսական կենտրոն՝ հատկապես շեշտը դնելով Վրաստանի հետ անդրսահմանային համագործակցության վրա: Հատուկ ուշադրություն պահանջող ոլորտներն են թեթև արդյունաբերությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, գյուղմթերքների վերամշակումը, առևտուրը և սպասակումը, հանգստի կազմակերպումը:

2012-2022թ.թ. Վանաձորի ռազմավարական ծրագրի շրջանակներում՝ առաջիկա 4 տարում նախատեսվում է նպաստել հետևյալ ոլորտների զարգացմանը .

- ✓ Վանաձորի տնտեսական զարգացման կենտրոնի հետ համատեղ իրագործել տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրեր
- ✓ Սկսնակ գործարարների համալիր աջակցության ծրագրերի կազմակերպում՝ ՓՄՁ տեխնոպարկի ստեղծում
- ✓ Նորարարությունների, նոր և տեղեկատվական տեխնոլոգիաների բիզնես ինկուբատորի ստեղծման հնարավորությունների ուսումնասիրում ու առաջարկության կազմում
- ✓ Վանաձորի տնտեսության հեռանկարային և հիմնական ճյուղերի /զբոսաշրջություն, տեքստիլ արդյունաբերություն/ զարգացման համալիր ծրագրերի մշակում
- ✓ Վանաձորի գործարանային լքված կամ չօգտագործվող տարածքների նպատակային օգտագործման ծրագիր
- ✓ Գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտի զարգացում:

# ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏ

*Օրենքով պարտադիր ծրագրային փաստաթղթերի ընդունում*

Քառամյա զարգացման ծրագրի խնդիրների առավել արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է բարելավել իրավական ոլորտում իրականացվող աշխատանքների կանոնակարգումը, այն հաշվով, որպեսզի օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված հարցերը լուծվեն վերջնական նպատակներին

համահունչ, միասնական, արդարացի և հավասար մոտեցումների սկզբունքի հիման վրա, ինչն անհնար է առանց մի շարք ծրագրային փաստաթղթերի առկայության: Այդ նպատակով անհրաժեշտ է ընդունել.
1. քաղաքապետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգ,
2. քաղաքապետարանի աշխատակազմի աշխատանքային ներքին կանոնակարգ,
3. համայնքի քաղաքաշինական կանոնադրություն,
4. համայնքային սեփականություն հանդիսացող գույքի և հողամասերի օտարման և օգտագործման տրամադրման կարգեր,
5. համայնքի ղեկավարի բոլոր կամավոր լիազորությունների իրականացման կարգեր:
6.ավագանու աշխատակարգի նորմ,
7.քաղաքացիների ընդունելության կարգ:
Նշված փաստաթղթերի մշակումը և ընդունումն անհրաժեշտ է իրականացնել 2013թ. ընթացքում:

2.2. Օրենսդրական հակասությունների և բացթողումների վերացում

Համայնքի բնակչության շահերի պաշտպանության տեսանկյունից առավել կարևոր է կազմակերպել կանոնակարգված աշխատանք ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների հետ՝ համայնքներին առնչվող ՀՀ օրենսդրության հակասությունների վերացման և բացերի լրացման նպատակով: Մասնավորապես, անհնար է ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների պատշաճ իրականացումն առանց ներքոշարադրյալ հարցերի օրինական լուծումների.

1. ՀՀ ազգային ժողովի կողմից օրենքների ընդունման արդյունքում համայնքի ծախսերի ավելացման և եկամուտների կրճատման դիմաց պետական փոխհատուցում համայնքին, ընդ որում ոչ թե երկու տարի հետո, այլ ողջամիտ ժամկետում,

2. Եկամտահարկից, շահութահարկից և բնապահպանական վճարներից համայնքին վճարման ենթակա մասհանումների խնդրի լուծում,

3. Գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի և վճարների, վարչական տուգանքների վերաբերյալ օրենսդրության հստակեցում և վճարման ենթակա գումարների չափերի փոփոխություն,

4. Գույքահարկի գծով համայնքի ունեցած անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման կարգի սահմանում իրավասու պետական մարմնի կողմից, ինչպես նաև անհրաժեշտ մեխանիզմների սահմանում՝ բացակայող, մահացած և հարկային պարտավորություններից խուսափող անձանցից նշված հարկերի հավաքագրման աշխատանքներում առկա խոչընդոտների վերացման նպատակով,

5. Կազմակերպել սեմինարներ համայնքի բնակիչներին՝ հարկերի, տեղական տուրքերի և վճարների վճարմանն առընչվող, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությանն իրազեկելու թեմաներով, օգտագործելով համատիրությունների օժանդակությունը.

6. Կազմակերպել տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում՝ առավել զարգացած երկրների հետ իրավական, օրենսդրական հարցերով փորձի փոխանակում:

# *ԱՌԵՎՏՈՒՐ, ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏ*

## 1.Բաժնի գործունեության ոլորտների ներկա իրավիճակի վերաբերյալ նկարագիր՝ հակիրճ

- *Հսկողության իրականացում առեւտրի, հանրային սննդի եւ կենցաղային ծառայությունների ոլորտում.*
- *Բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության տրամադրում.*
- *Առեւտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի եւ վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24$^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության տրամադրում.*
- *Համայնքային ենթակայության ճանապարհների վրա ճանապարհային անվտանգ երթեւեկության կազմակերպում.*
- *Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների, կազմակերպությունների գործունեության կազմակերպում.*
- *Իրավասու մարմինների ներկայացմամբ համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման ու հանման հաստատում եւ թույլատրում:*

## 2.Ոլորտում առկա խնդիրների նկարագրում և դրանց լուծման ուղիները նաև ֆինանսական միջոցների վերաբերյալ հիմնավորված տեղեկատվություն
## (նպատակ-խնդիր-լուծման ծրագիր-արդյունք)

| N | նպատակ (ներ) | խնդիր (ներ) | ծավալ կամ քանակ | լուծման ծրագիր (ներ) | ֆինանսներ (հազ. դրամ) | արդյունք (ներ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տեղական տուրքերի հավաքագրման վերահսկում | Որոշ սուբյեկտներ խուսափում են տեղական տուրքը վճարելուց | Ունի ճշտման անհրաժեշտություն | Մշտական հսկողության սահմանում, խուսափողներին վարչական պատասխանատվության ենթարկում: | --- | Տեղական տուրքերի 100% հավաքա-գրում |
| 2 | Բացօթյա փողոցային առևտրի կանոնակարգում | Որոշ քաղաքացիներ բացօթյա առևտուր են կազմակերպում չսահմանված վայրերում | Քաղաքի շուկայամերձ տարածքներում, Բազում, Տարոն և այլ թաղամասերում | Ամենօրյա ստուգայցեր՝ ոստիկանության քաղաքային բաժնի հետ համատեղ: Ազգաբնակչության շրջանում բացատրական աշխատանքներ՝ ԶԼՄ-ների միջոցով: Վարչական տույժերի կիրառում: | --- | Բացօթյա փողոցային առևտրի նվազեցում և աստիճա-նաբար վերացում |
| 3 | Ժամը $24^{00}$-ից հետո աշխատող օբյեկտներից տեղական տուրքի գանձում | Ժամը $24^{00}$-ից հետո աշխատող օբյեկտների հայտնաբերման անհրաժեշտություն | Ունի ճշտման անհրաժեշտություն | Գիշերային ստուգայցերի կազմակերպում: | - | Նշված տեղական տուրքի 100% հավաքա-գրում |
| 4 | Անցում առևտրի և սպասարկման առավել քաղաքակիրթ մեթոդների | Օբյեկտների մեծ մասն սպասարկումն իրականացնում են ավանդական մեթոդներով: | | Ուսումնասիրություններ և մշտական աշխատանք առևտրի և սպասարկման օբյեկտների հետ: | - | Ազգաբնակչ-ության սպասարկ-ման բարելավում |

# Ծ Ա Խ Ս Ա Յ Ի Ն   Մ Ա Ս

| N | նպատակ (ներ) | խնդիր (ներ) | ծավալ կամ քանակ | լուծման ծրագիր (ներ) | ֆինանսներ (հազ. դրամ) | արդյունք (ներ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Անվտանգ երթևեկության կազմակերպում | Չկարգավորվող խաչմերուկների կահավորման անհրաժեշտություն | | Լուսաֆորային սարքերի ձեռքբերում, վերանորագում և շահագործում | 2013թ. - 7.000<br>2014թ. - 7.000<br>2015թ. - 7.000<br>2016թ. - 7.000<br>Ընդ.՝ 28.000 | Անվտանգ երթևեկու-թյան ապահովում |
| 2 | Անվտանգ երթևեկության կազմակերպում | Ճանապարհային նշանների ձեռքբերման և վերանորոգման անհրաժեշտություն | | Տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկության ապահովում | 2013թ. - 1.500<br>2014թ. - 1.500<br>2015թ. - 1.500<br>2016թ. - 1.500<br>Ընդ.՝ 6.000 | Անվտանգ երթևեկու-թյան ապահովում |
| 3 | Անվտանգ երթևեկության կազմակերպում | Ճանապարհների նշագծում | | Տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկության ապահովում | 2013թ. – 5.000<br>2014թ. - 5.000<br>2015թ. – 5.000<br>2016թ. – 5.000<br>Ընդ.՝ 20.000 | Անվտանգ երթևեկու-թյան ապահովում |
| 4 | Անվտանգ երթևեկության կազմակերպում | Կանգառների կառուցման և վերանորոգման անհրաժեշտություն | | Ուղևորների սպասարկման որակի բարելավում | 2013թ. – 2.000<br>2014թ. - 2.000<br>2015թ. – 2.000<br>2016թ. – 2.000<br>Ընդ.՝ 8.000 | Անվտանգ երթևեկու-թյան ապահովում |

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Սոցիալական ապահովության ոլորտի հիմնական նպատակն է նպաստել համայնքում բնակչության աղքատության նվազեցմանն ու հաղթահարմանը, մեծացնել ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ծրագրերի հասցեականության մեծացման և նպատակային ծրագրերի իրականացման միջոցով, բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը:

Սոցիալական քաղաքականության ոլորտում քաղաքապետարանի օրենքով ամրագրված լիազորությունների շրջանակը նեղ է, դրանց գերակշիռ մասը կրում է կամավոր բնույթ: Չնայած դրան՝ քաղաքապետարանը, համաձայն տեղական ինքնակառավարման հանրաճանաչ սկզբունքների, պարտավորություն է կրում բազմաթիվ սոցիալական հիմնախնդիրների լուծման համար:

Օրենսդրորեն ամրագրված իրավասությունների շրջանակներում քաղաքապետարանը բնակչության սոցիալական հիմնահարցերի լուծման ուղղությամբ իրականացնում է պետության կողմից պատվիրակված և կամավոր լիրազորություններ:

**Պատվիրակված լիրազորություններ՝**

Սոցիալական աջակցության ծրագրերը «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված նպաստներն են, և ՀՀ մարզերում իրականացվում են ՀՀ «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով այդ ծրագրերի համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված են և Վանաձորում իրականացվում են հետևյալ նպաստների նշանակման և վճարման աշխատանքները.

1) ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության,
2) մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ,
3) երեխայի ծննդյան միանվագ նպաստ,
4)զոհված՝ ՀՀ ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձանց ընտանիքի նպաստ:

Որպես աղքատության հաղթահարման կարևորագույն գործիք՝ առանձնահատուկ դեր և նշանակություն ունի ՀՀ կառավարության կողմից սահմանված ընտանեկան նպաստը:

Համայնքը Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 3-ի նիստի N 21 արձանագրության համաձայն աջակցում է «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրմանը՝ նպաստում ինտեգրված սոցիալական ծառայություններ մատուցող սոցիալական աշխատողի կամ սոցիալական դեպք վարողի (սոցիալական աշխատող) ինստիտուտի կայացմանը (կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սոցիալական ծառայությունների տրամադրում, այդ թվում՝ դիմումների ընդունում, կարիքի գնահատում և սոցիալական ծառայություն տրամադրելու որոշում ընդունելու կամ դրամական վճարի համար առաջարկություն ներկայացնելու գործառույթներ, մեկ մարմնի կամ մեկ պատուհանի սկզբունքի կիրառման միջոցով իրականացում):

ՄԾՏԲ գործնության արդյունավետության և որակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է

- Տարածքային բաժնի աշխատանքային պայմանների բարելավում,
- Համակարգչային տեխնիկայով հագեցում և համացանցային կապով ապահովում,
- Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, ՏԻՄ, ոչ պետական) սոցիալական աշխատանք կատարող կադրերի վերապատրաստում,
- Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հավաքում, ամփոփում, հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերում:

**Կամավոր լիրազորություններ՝**

- Համայնքի տարածքում կազմակերպվում է սոցիալական օգնության ծառայության գործունեություն,
- Հայտնաբերվում եւ միջոցներ են ձեռնարկվում՝ օգնելու քաղաքի տարածքում բնակվող սոցիալապես առավել անապահով ընտանիքներին եւ ռիսկային խմբերին պատկանող անձանց սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ,
- Միջոցներ են ձեռնարկվում իրականացնելու սոցիալական ապահովության նպատակային ծրագրեր՝ հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, տարեցների, միայնակ ծերերի,առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, խնամատար ընտանիքների եւ այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ,
- Համագործակցություն է տարվում սոցիալական հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ՝ ակտիվացնելով հասարակական կազմակերպությունների գործունեությունը բնակչության սոցիալական կարիքների բավարարման գործում,
- Կազմակերպվում է քաղաքապետարան դիմած ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրություն, տրամադրվում է դրամական աջակցություն:

Համայնքը համագործակցում է ,,Վետերանների խորհրդի,, ՀՀ Լոռու մարզի ԵԿՄ խորհրդի, մանկատան, ծերանոցների և կրոնական կազմակերպությունների, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, «Հայկական կարիտաս» ԲՀԿ, «Զանգակատուն» ԲՀԿ, «Օրրան» «Արան» «Խաչվող ուղիներ» «Փոքր իշխան» և այլ հասարակական կազմակերպությունների հետ:

Առողջապահական բնագավառում արդյունավետ ծրագրեր են իրականացնում՝ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպությունը, («Մինչև 14 տարեկան երեխաների անվճար ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու հնարավորության ապահովման» ծրագիր) ,

«ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպությունը (առաջնային առողջապահական ծառայություններ՝ անվճար խորհրդատվական, հետազոտական և որոշակի դեղորայքի ապահովման ծրագիր):

Համայնքում նախատեսվում է ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական և պրոթեզաօրթոպեդիկ պարագաների նորոգման ծառայություն (համայնքային բյուջեով նախատեսված է 0.42 մլն դրամի ֆինանսական ներդրում), որը զբաղվելու է հաշմանդամություն ունեցող անձանց (հատկապես՝ հաշմանդամ երեխաների և նրանց ծնողների) վերականգնողական և տեխնիկական այլ միջոցների ձեռքբերման և տրամադրման հարցերով:

Առաջիկա տարիներին համայնքը կշարունակի աջակցել՝

- «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից տարեցների խնամքի և տաք սննդի տրամադրման աջակցության ծրագրի իրականացմանը՝ յուրաքանչյուր տարի հատկացնելով մինչև 3,0 մլն դրամ,
- Վանաձորի նախկին տնակային ավանների բնակիչներին բնակարանային վարձավճարի տրամադրմանը, համաձայն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 1-ի թիվ 317 որոշման. ֆինանսական աջակցության չափը տարեկան մինչև 2,8 մլն դրամ,
- Սպորտի բնագավառի լավագույն մարզիկներին ու մարզիչներին տրամադրվող ֆինանսական աջակցության չափը՝ տարեկան մինչև 1,6 մլն դրամ,
- ՀՀ պաշտպանության և մարտական գործողությունների ժամանակ զոհված/մահացած զինծառայողների և ազատամարտիկների՝ համայնքի բնակիչ հանդիսացող ընտանիքներին՝ ջեռուցման համար. ֆինանսական աջակցության չափը՝ տարեկան շուրջ 2,0 մլն դրամ,
- Հայրենական պատերազմի վետերանների խորհրդին. ֆինանսական աջակցության չափը՝ տարեկան մինչև 500,000 դրամ,
- Սոցիալապես անապահով ընտանիքներին և սոցիալական այլ ուղղվածություն ունեցող կառույցներին. ֆինանսական աջակցության չափը՝ տարեկան մինչև 7,0 մլն դրամ: